



**ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆՈՒՆ ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

2007-2008թ.թ.  
Հաշվետվություն

[www.partnership.am](http://www.partnership.am)

## **Բովանդակություն**

<b>Բովանդակություն.....</b>	<b>1</b>
<b>Ներածություն և իրավիճակը երկրում.....</b>	<b>2</b>
<b>Խորհրդարանական և նախագահական ընտրություններ.....</b>	<b>4</b>
<b>Մոնիտորինգ և քարոզչություն.....</b>	<b>6</b>
Քարոզչություն և լոբբինգ երկրում և երկրից դուրս.....	6
Լրատվամիջոցների մոնիտորինգ - Խորհրդարանական ընտրություններ, նախագահական ընտրություններ.....	6
Կուսակցությունների ընտրաընթացի ֆինանսավորման մոնիտորինգ.....	8
Եվրոպական հարևանության քաղաքականություն.....	10
Հազարամյակի մարտահրավերներ ծրագիր.....	12
Ճանապարհաշինության մոնիտորինգ.....	12
Պետական գնումների մոնիտորինգ.....	15
Դատարանների մոնիտորինգ.....	17
Խորհրդարանի մոնիտորինգ.....	19
Բանակի մոնիտորինգ.....	20
Ժողովրդավարության մոնիտորինգ.....	22
Փակ և կիսափակ հաստատությունների մոնիտորինգ.....	24
Եվրոպայի Խորհրդի սկզբունքների և չափանիշների հետ ՀՀ օպերատիվ հետա- խուզական գործունեության մասին օրենքի համեմատական վերլուծություն.....	28
<b>Քաղաքացիական հասարակության հմտությունների զարգացում.....</b>	<b>31</b>
<b>Հայտարարություններ.....</b>	<b>34</b>
<b>2007-2008թ. միջոցառումների ցանկ.....</b>	<b>51</b>
<b>Գործընկերության անդամները.....</b>	<b>53</b>

## Ներածություն և իրավիճակը երկրում

Գործընկերության նպատակը Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների զարգացումն է և բաց հասարակության արժեքների՝ օրենքի գերակայության, անկախ մասնագիտական մամուլի խթանումը, ինչպես նաև մարդու իրավունքների, այդ թվում՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ազատությունների կիրառման արդյունավետ մեխանիզմների մշակումը: Այն նախաձեռնվել է քաղաքացիական հասարակության անդամների ակտիվ խմբի կողմից՝ արձագանքելով երկրում առկա մի շարք խնդիրների համար քարոզչական մեխանիզմների ամրապնդման անհրաժեշտությանը, և այժմ իրենից ներկայացնում է 60 հասարակական կազմակերպությունների միավորում: Այս խմբերի ազատ հիմունքներով անդամակցությունն իրականացվում է երեք առաջնորդող նպատակների շուրջ՝ ժողովրդավարական բարեփոխումների շարունակական գործընթացի խթանում, ժողովրդավարական կառավարման համար այլընտրանքային քարոզչական լուծումների քննարկում և մշակում, քաղաքացիական ակտիվ մասնակցության համար հասարակության տեղեկացվածության և համապատասխան կրթության խթանում:

Գործընկերության կազմակերպությունների համատեղ աշխատանքի նպատակն է՝ ավելի տեսանելի դարձնել երկրում տեղի ունեցող քաղաքական զարգացումները և դրանց հետևանքները, և առաջարկել իրենց տեսակետներն ու առաջարկությունները Գործընկերության գերակա ոլորտ հանդիսացող մի շարք հարցերի շուրջ: ԳՀԲՀ համատեղ քարոզչական ջանքերն իրականացվում են այս հարցերի շուրջ լայն հասարակության և որոշումներ կայացնողների ուշադրությունը հրավիրելու և ժողովրդավարական բարեփոխումների և քաղաքական մակարդակում փոփոխությունների հասնելու միջոցով:

Անցած երկու տարիները փորձության և դժվարին տարիներ էին երկրի համար, քանի որ այն անցավ երկու ընտրության միջով և ականատեսը եղավ հետընտրական զարգացումներին և դրանց հետևանքներին: Գործընկերության գործունեությունը մշակվել է երկրի քաղաքական իրավիճակին և դրա հետևանքով վրա հասած ճգնաժամին համապատասխան: Հետընտրական ճգնաժամի արդյունքում պետության կողմից պարտադրված անսպասելի և զանգվածային ճնշումները, մամուլի, քաղաքացիական մասնակցության, քաղաքական ազատությունների խիստ սահմանափակումները բացեցին միջազգային հանրության աչքերը: ԵՖ, ԵԱՀԿ, ԵՄ, ՄԱԿ-ի և ԱՄՆ կառավարության կողմից հետևեց խիստ և իր նախադեպը չունեցող տրամաբանական ու պատշաճ արձագանքը: Միջազգային համայնքը պահաջեց արագ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ օրինաչափության վերականգնման և ժողովրդավարական չափանիշներին համապատասխանության ապահովման ուղղությամբ: Պաշտոնական կառույցների և միջազգային քաղաքացիական հասարակության բազմաթիվ հայտարարություններում և հաղորդագրություններում արտացոլվեցին մի շարք առաջարկություններ և որոշակի միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն: Այնուամենայնիվ, չնայած բոլոր միջազգային ճնշումներին, նշված խնդիրներին համապատասխան արձագանք չտրվեց, և մարդու իրավունքների հետ կապված հարցերը

երկրում դեռևս ամբողջական լուծում չեն ստացել: Այս համատեքստում է՛լ ավելի է կարևորվում Գործընկերության դերը՝ որպես այլընտրանքային քաղաքականության ձևավորման, հանրային քննարկումների, ինչպես նաև երկրում ընթացող քաղաքական գործընթացների վերաբերյալ հանրության իրազեկման աղբյուր:

Գործընկերությունը վերածվել է արդյունավետ և վստահելի մի կառույցի, որն իր ավելի, քան 60 անդամների համատեղ քարոզչական ջանքերի միջոցով ի վիճակի է քարոզչական լուծումներ առաջարկել ժողովրդավարական կառավարման համար: Գործընկերության՝ ամենատարբեր ոլորտները ներկայացնող անդամների աճող թիվը և Հիմնադրամի ծրագրերի շրջանակներում ավելացող քաղաքական հմտությունները թույլ են տալիս ԳՀԲՀ-ին՝ ներգրավվել հարցերի լայն շրջանակներում և համապատասխան ներկայացուցչություն ունենալ իր հետաքրքրությունները ներկայացնող ոլորտներում, մասնավորապես այնպիսիներում, որոնք կապված են ժողովրդավարական հաստատությունների կայացման և բաց հասարակության արժեքների խթանման հետ: Դրանցից են՝ օրենքի գերակայությունը, անկախ մասնագիտական մամուլի կայացումը, մարդու իրավունքների, այդ թվում՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների մշակումը:

2007 և 2008 թ.թ., ինչպես և 2006-ին, ԳՀԲՀ-ն դուրս է եկել կարևոր քաղաքական, սոցիալական և տնտեսական հարցերում հանրության իրազեկության բարձրացման և այլընտրանքային քաղաքական առաջարկների մշակման իր ավանդական դերի սահմաններից: Դրան գուգահեռ, այն շարունակել է իրականացնել մոնիտորինգային գործունեություն՝ մոնիտորինգը դիտելով որպես երկրում իրական բարեփոխումների համար պայքարի գործիք: ՀՄԾ-ն և ԵՀՔ-ն համարելով ոչ միայն լայնածավալ կարևորագույն ծրագրեր, այլև Հայաստանում ժողովրդավարության առաջընթացի համար եզակի հնարավորություն՝ Գործընկերությունը շարունակել է 2007 և 2008թ.թ. ՀՄԾ-ն և ԵՀՔ-ի իրականացման մոնիտորինգը: Այն ծառայել է որպես միջոց՝ կարևորագույն հարցերի շուրջ նշյալ ծրագրերի շահառուների՝ հասարակության, միջազգային կառույցների, ինչպես նաև տեղական կազմակերպությունների և կառավարության ուշադրությունը կենտրոնացնելու համար: Նախորդ տարվանից շարունակվող այս մոնիտորինգից, ինչպես նաև ԵՀՔ չափանիշների համատեքստում ժողովրդավարության մոնիտորինգի և նախընտրական ու հետընտրական շրջաններում մամուլի մոնիտորինգի աշխատանքներից բացի, Գործընկերությունն ընդլայնելով իր մոնիտորինգային ջանքերը, իրականացրել է նաև բանակի մոնիտորինգ, խորհրդարանի մոնիտորինգ և դատարանների մոնիտորինգ:

2008թ. իրադարձությունները փոխեցին երկիրը, և քաղաքացիական հասարակության առջև ծառայավ նոր իրականություն, որին այն նախկինում չէր բախվել, ինչպես օրինակ մարտի 1-ից առաջ և հետո ընդդիմության անդամների զանգվածային ձերբակալությունների արդյունքում երկրում քաղաքական բանտարկյալների գոյության միջազգայնորեն ճանաչված փաստը և միջոցառումներ անցկացնելու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին դառնալիքներ տրամադրելու մերժման հանգամանքը:

Գործընկերությունը շարունակել է իրականացնել սոցիալական և քաղաքական կարևոր հարցերի վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և բանավեճեր նախաձեռնել քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչների միջև: Հաշվի առնելով, որ Գործընկերության նախաձեռնած միջոցառումները շատ քիչ են լուսաբանվում մամուլում (սա հատկապես վերաբերում է հեռուստատեսային լուսաբանմանը) և կառավարության ներկայացուցիչները մեծ մասամբ դրանց չեն մասնակցում, Գործընկերությունը, շարունակելով հանդերձ հանրային միջոցառումների կազմակերպման ավանդույթը, այնուամենայնիվ սահմանափակել է դրանց թիվը և փոխարենն իր ուժերը կենտրոնացրել երկրի ներսում և դրա սահմաններից դուրս քարոզչական ջանքերի վրա՝ նպատակ հետապնդելով պարտադրել կառավարությանը իրականացնել իմաստավից բարեփոխումներ՝ մակերեսային արագ գործողությունների փոխարեն:

Գործընկերությունը նաև հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցից վերջինն արտացոլում էր մեր մտահոգությունն այն փաստով, որ հյուրանոցները կառավարության կողմից հստակ հրահանգ էին ստացել չտրամադրել իրենց տարածքները քննադատ քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպվող միջոցառումների անցկացման համար:

Գործընկերություն հանուն բաց հասարակության կազմակերպության և դրա գործունեության վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել Գործընկերության [www.partnership.am](http://www.partnership.am) կայքում:

### **Խորհրդարանական և նախագահական ընտրություններ**

2007 և 2008թ.թ կարևորագույն տարիներ էին Հայաստանի համար՝ պայմանավորված խորհրդարանական և նախագահական ընտրություններով: Այդ կապակցությամբ Գործընկերության ռեսուրսները, որոնք գումարվեցին Հիմնադրամի Քաղաքացիական հասարակության, ՋԼՄ-ների և Իրավաբանական ծրագրերի հետ, ուղղված էին նախընտրական և ընտրական ժամանակաշրջանները հասարակության համար առավել թափանցիկ և հաշվետու դարձնելուն, ինչպես նաև պետության համար առանցքային հարցերի քննարկման նպատակով ֆորումի ստեղծմանը:

Երևանի մամուլի ակումբը, որը Գործընկերության կազմում գործող առաջատար լրատվական հասարակական կազմակերպություն է, իրականացրել է նախընտրական գործընթացի մամուլի մոնիտորինգ՝ բացահայտելով ակներև կողմնակալություն և մի շարք խախտումներ լուսաբանման ընթացքում: Գործընկերության մի շարք անդամներ ընտրությունների ընթացքում թե՛ մայրաքաղաքում և թե՛ մարզերում ծավալել են դիտորդական գործունեություն: Ընտրախախտումների և կեղծիքների վերաբերյալ նրանց կազմած փաստաթղթերը հիմք են հանդիսացել քաղաքացիական հասարակության կողմից ընտրություններին տրված բացասական գնահատականի համար:

Transparency International հակակոռուպցիոն կենտրոնը ուսումնասիրել է խորհրդարանական ընտրությունների ընթացքում կուսակցությունների արշավների ֆինանսավորման և նախագահական ընտրությունների ընթացքում գործադիր իշխանության կողմից վարչական ռեսուրսի օգտագործման հարցերը: Մամուլի նկատմամբ սահմանված լիակատար վերահսկողության արդյունքում հնարավորություն չէր ստեղծվում իմաստալից և խորը քննարկումներ անցկացնել կուսակցությունների պլատֆորմների վերաբերյալ խորհրդարանական ընտրություններին նախորդող ժամանակաշրջանում և բանավեճեր կազմակերպել նախագահության թեկնածուների միջև նախագահական ընտրությունների ընթացքում, որպեսզի դրանով լրացվեր օբյեկտիվ տեղեկատվության պակասը: Այդպիսով, Հիմնադրամը, ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի համաֆինանսավորմամբ, օժանդակել է ամենաճանաչված հեռուստաընկերություններից մեկով հեռուստաբանավեճերի անցկացմանը: Բանավեճերի ընթացքում Գործընկերության փորձագետները իրենց վերլուծություններն են ներկայացրել բարձրացվող հարցերի, ինչպես նաև կուսակցությունների և թեկնածուների պլատֆորմների վերաբերյալ: ՄԱԿ-ի Զարգացման գրասենյակի հետ համատեղ մեկ այլ նախագիծ ուղղված էր E-channel-ի մշակմանը, որը Հայաստանի միակ վերլուծական կայքէջն է և պարբերաբար օն-լայն համայնքին նորություններ է հաղորդում խորհրդարանական ընտրությունների մասին: Նախագիծն իրագործվել է Գործընկերության անդամ Ինտերնյուսի կողմից:

Առաջին անգամ մի խումբ լրագրողների և Գործընկերության մասնագետների կողմից իրականացվել և հանրության ուշադրությանն է ներկայացվել հիմնական քաղաքական կուսակցությունների պլատֆորմների ընդգրկուն վերլուծություն: Որպես այս նախագծի տրամաբանական շարունակություն, մշակվել է ընտրված կուսակցությունների կողմից Ազգային Ժողովում ծավալվող գործունեության ուսումնասիրման փորձնական նախագիծը, որով նրանց աշխատանքը դիտարկվել է իրենց պլատֆորմների հետ համեմատության մեջ:

Նախագահական ընտրություններին հետևած բռնություններն անսպասելի հարված էին, բայց դեպքերի զարգացումները հաստատեցին քննադատական քաղաքացիական հասարակության մտահոգությունը ժողովրդավարական կառավարման շարունակական հետընթացի և մարդու իրավունքների, մամուլի և խոսքի ազատության, օրենքի գերակայության, ընտրությունների ազատ և անաչառ վարչարարության ոլորտներում բարելավման բացակայության վերաբերյալ: Նախագահական ընտրություններին հետևած ողբերգական իրադարձությունները Հայաստանում <<ժողովրդավարության դեֆիցիտի>> շարունակական կուտակման արդյունք էին:

Մարդու իրավունքների ոլորտում առկա ճգնաժամին քաղաքացիական հասարակության տված արձագանքը համաչափ չէր՝ հիմնականում քաղաքական կապվածությունների և արտակարգ իրավիճակներում գործելու հմտություններին չտիրապետելու հետևանքով: Այդ իրադարձություններին միակ համաչափ արձագանքը տրվեց Գործընկերության և Հիմնադրամի երկարատև գործընկերների կողմից: Գործընկերության միջոցով

բարձրաձայնվել են մի շարք իրավական հարցեր, և ապահովվել է քաղաքական բանտարկյալների իրավաբանական ներկայացուցչությունը և նրանց դատական գործերի լուսմների մոնիտորինգը:

## **Մոնիտորինգ և քարոզչություն**

### **Քարոզչություն և լոբբինգ երկրում և երկրից դուրս**

Գործընկերությունը մնում է քաղաքացիական հասարակության միակ կոալիցիան, որը հաջողված քարոզչական գործունեություն է իրականացնում օրենսդրական փոփոխությունների ուղղությամբ, տրամադրում է օրենսդրության խոցելի կետերի փորձագիտական վերլուծություն և ստեղծում ֆորում՝ օրենսդրության այնպիսի թերի կետերի շուրջ բանավիճելու համար, որոնք կարող են լրջորեն ազդել մարդու իրավունքների վրա: 2007 և 2008թ.թ. Գործընկերության քարոզչական ջանքերը հիմնականում ուղղված են եղել Գործընկերության փորձագետների կողմից պատրաստված 3 փաստաթղթերի, որոնք վերաբերում էին ԵՀՔ կատարմանը 2007 և 2008թ.թ (մանրամասները՝ զեկույցի ԵՀՔ բաժնում) և որոնք լայնորեն օգտագործվել են որպես քարոզչության գործիք: Գործընկերության հիմնական խումբը այդ փաստաթղթերը, որոնց թվում՝ վերլուծություն, քննադատություն և առաջարկներ, երեք զեկույցի առիթով տարել է Բյուսել և հանդիպել Եվրոպական հանձնաժողովի համապատասխան անդամների հետ՝ ԵՀՔ իրականացման վերաբերյալ քաղաքացիական հասարակության կարծիքը բարձրաձայնելու նպատակով: Եվրահանձնաժողովի զեկույցը, ընդհանուր առմամբ դրական լինելով հանդերձ, բավականաչափ օգտվել է Գործընկերության փորձագետների պատրաստած նյութերից: Լոբբինգ և քարոզչության իրականացնելիս Գործընկերությունը մեծ չափով հիմնվել է իր մոնիտորինգի գործունեության արդյունքների վրա: Գործընկերության կողմից 2007 և 2008 թ.թ. համապատասխանաբար իրականացվել է հետևյալ մոնիտորինգային գործունեությունը:

### **Լրատվամիջոցների մոնիտորինգ - Խորհրդարանական ընտրություններ, նախագահական ընտրություններ**

Երևանի մամուլի ակումբը՝ Գործընկերության առաջատար հասարակական կազմակերպություններից մեկը, իրականացրել է նախընտրական շրջանի ՋԼՄ մոնիտորինգ և բացահայտել լուսաբանման լուրջ կողմնակալություն և խախտումներ:

#### *Երևանի մամուլի ակումբ և <<Թիմ>> հետազոտությունների կենտրոն*

Երևանի մամուլի ակումբը և <<Թիմ>> հետազոտությունների կենտրոնը, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ, իրականացրել է 2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունների լուսաբանման մոնիտորինգ հայաստանյան ՋԼՄ-ների

շրջանում: Այն ընդգրկել է թե՛ պաշտոնական քարոզարշավը, այսինքն՝ այն շրջանը, որը նախատեսվում է իրավական կանոնակարգերով և որի ընթացքում միջազգային դիտորդները հետևում են առաջատար ՁԼՄ-ների պահվածքին, և թե՛ քարոզարշավին նախորդող ժամանակաշրջանը, երբ ի հայտ են գալիս մամուլի անկախության հետ կապված հիմնական խնդիրներն ու որոնք կանոնակարգման շրջանակներից դուրս են և հետևաբար չեն արժանանում միջազգային դիտորդների ուշադրությանը:

Խորհրդարանական ընտրությունների ընթացքում ուսումնասիրվել է 18 լրատվամիջոց (14 հեռարձակվող և 4 տպագիր), իսկ նախագահական ընտրությունների ընթացքում՝ 8 հեռարձակվող լրատվամիջոց:

Մոնիտորինգը նպատակ ուներ պարզել ու բացահայտել հետևյալը.

- լրատվամիջոցների օրենսդրական կարգավորման արդյունավետությունը ընտրությունների ընթացքում և դրանցից առաջ;
- ընտրությունների հանդեպ հայաստանյան լրատվամիջոցների ուշադրության աստիճանը;
- քաղաքական գործիչների, նախագահական թեկնածուների վերաբերյալ ընտրողներին տրամադրվող տեղեկատվության համաչափությունը;
- քաղաքական գործիչների, կուսակցությունների և թեկնածուների կարծիքներն ու տեսակետներն արտահայտելու համար հեռուստա- և ռադիոէթերի մատչելիությունը:

Այս ամենին հասնելու համար կիրառվել են որակական և քանակական մոնիտորինգի մեթոդները: Որակական մոնիտորինգը ներառել է Հայաստանում ընտրական գործընթացների հետ առնչվող օրենսդրության և պաշտոնական այլ փաստաթղթերի ուսումնասիրություն, հանդիպումներ լրատվամիջոցների ղեկավարների, լրագրողների, քաղաքական գործիչների և հասարակության հետ, ինչպես նաև նախընտրական շրջանում լրատվամիջոցների գործունեության վերաբերյալ նրանց պաշտոնական հայտարարությունների վերլուծություն: Քանակական մոնիտորինգն ընդգրկել է լրատվամիջոցների հրապարակումների և ծրագրերի ուղղակի չափազանցումներ:

Մոնիտորները ձայնագրել են մեջբերումներ, դրանց ենթատեքստը/բնույթը (դրական, բացասական, չեզոք), ինչպես նաև կուսակցություններին/թեկնածուներին հատկացված էթերաժամը/թերթի տարածքը: Ուսումնասիրությունների արդյունքում արված միջանկյալ և վերջնական բացահայտումները ներկայացվել են մամուլի ասուլիսների ընթացքում: Վերջնական զեկույցները տպագրվել են նաև բրոշյուրների տեսքով, որոնք պարունակել են նաև այլ նյութեր ընտրությունների ընթացքում մամուլի վերաբերյալ:

Մոնիտորինգը և բացահայտումների լայն հրապարակումը բավականին ուժեղ ներգործություն է ունեցել հետևյալ պատճառներով.



1. Դրանք մատնանշել են հայաստանյան մամուլում առկա խնդիրները և օգնել են գտնելու դրանց արձագանքման ուղիները (թե՛ ընտրաշրջանում և թե՛ դրանից հետո),
2. Մոնիտորինգի զեկույցները պարունակել են ընտրությունների ընթացքում լրատվամիջոցների վերաբերյալ օրենսդրության կատարման ապահովմանը կոչված պետական մարմինների աշխատանքի գնահատականը, այդպիսով թույլ տալով բարձրացնել ընտրությունների վարչարարության հետ կապված կարևորագույն հարցեր,
3. Ընտրություններին հետևող տեղական և միջազգային կազմակերպությունները վստահելի տեղեկատվություն են ստացել ընտրական գործընթացներում մամուլի դերի վերաբերյալ,
4. Ուսումնասիրությունների վրա հիմնված առաջարկությունները նպաստել են Հայաստանի ընտրական օրենսդրության բարելավմանը,
5. Ձեկույցներում պարունակվող վերլուծությունը հնարավորություն է տվել վերապատրաստման ծրագրեր մշակել գործող լրագրողների համար, ինչպես նաև նպաստել է լրագրողական դպրոցների համար ուսումնական դասընթացների մշակմանն ու բարելավմանը,
6. Մոնիտորինգի տվյալները նյութ են հանդիսացել ընտրությունների արդյունքները վիճարկող դատական գործընթացների համար: ՀՀ Սահմանադրական դատարանը և Մարդու իրավունքների պաշտպանը իրենց հայտարարություններում հղումներ են կատարել ԵՄԱ/ԹԻՄ մոնիտորինգի զեկույցներին,
7. Մոնիտորինգը և դրա արդյունքում արված բացահայտումներն օգնել են ավելի կոնկրետացնել քաղաքացիական հասարակության քարոզչական գործունեությունը լրատվամիջոցների ոլորտում:

Մոնիտորինգը լրատվական համայնքի, հասարակության, քաղաքական շրջանակների և միջազգային դիտորդների ուշադրության կենտրոնում էր: Այն լայնորեն լուսաբանվել է մամուլում, շարունակաբար մեջբերվել և դարձել է կարևորագույն գործոն Հայաստանի հասարակական և քաղաքական կյանքում, այսպիսով իր նպաստը բերելով երկրի ժողովրդավարեցման խնդրում:

### **Կուսակցությունների ընտրաքաղաքական ֆինանսավորման մոնիտորինգ**

Transparency International հակակոռուպցիոն կենտրոնն ուսումնասիրել է կուսակցությունների ընտրաքաղաքական ֆինանսավորման հարցերը խորհրդարանական ընտրությունների ընթացքում և գործադիր իշխանության կողմից վարչական ռեսուրսի չարաշահման խնդիրը նախագահական ընտրությունների ժամանակաշրջանում:

2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունների ընթացքում Transparency International հակակոռուպցիոն կենտրոնը ԲՀԻ աջակցությամբ իրականացրել է ընտրարշավի ծախսերի և վարչական ռեսուրսի օգտագործման մոնիտորինգ: Երկու նախագծերն էլ իրականացվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում: Գյումրիում և Վանաձորում դրանք իրականացվել են Transparency International-ի գործընկերը հանդիսացող տեղական ՀԿ-ների՝ «Ասպարեզ» լրագրողների ակումբի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից համապատասխանաբար: Երկու նախագծերում օգտագործված մեթոդոլոգիան 2005թ. տպագրված Բաց Հասարակության Արդարադատության նախագծի «Ընտրարշավների ֆինանսավորման մոնիտորինգ. ձեռնարկ ՀԿ-ների համար» գրքում նկարագրված ընտրարշավի ծախսերի և վարչական ռեսուրսի օգտագործման մոնիտորինգի մեթոդոլոգիայի հայկական պայմաններին հարմարեցված տարբերակներն են: (Ձեռնարկի նշված գլուխների հայերեն թարգմանությունը կտպագրվի Transparency International-ի կողմից 2009թ. սկզբին):

Մոնիտորինգի նպատակը քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությանը և հաշվետու լինելուն նպաստելն էր, ինչպես նաև ընտրարշավների ֆինանսավորման հարցերը կարգավորող ընթացիկ օրենսդրության խնդիրների ու բացթողումների, ընտրարշավի ընթացքում տեղ գտած օրինախախտումների և չարաշահումների վերհանումը: Transparency International հակակոռուպցիոն կենտրոնի մոնիտորինգի խմբերն ուսումնասիրել են ընտրական ծախսերի բոլոր հիմնական հոդվածները, ինչպիսիք են՝ գովազդ մամուլում, տարատեսակ նյութերի պատրաստում և տեղադրում (պաստառներ, գովազդային թերթիկներ, բրոշյուրներ և այլն), ընտրարշավի միջոցառումների կազմակերպման ծախսեր (հանրահավաքներ, ընտրական հանդիպումներ սրահներում և հրապարակներում, երթեր և այլն):

Մոնիտորինգի արդյունքում բացահայտվել է, որ թե՛ 2007թ. խորհրդարանական և թե՛ 2008թ. նախագահական ընտրություններում որոշակի կուսակցություններ և նախագահի թեկնածուներ գերազանցել են կուսակցությունների և նախագահի թեկնածուների ընտրական ֆոնդերի համար օրենքով սահմանված ծախսերի չափը (համապատասխանաբար 60 մլն և 70մլն ՀՀ դրամ): 2007թ. խորհրդարանական ընտրություններում դրանք էին Հայաստանի Հանրապետական կուսակցությունը և Բարգավաճ Հայաստան կուսակցությունը, իսկ 2008թ. նախագահական ընտրություններում՝ նախագահի թեկնածուներ Սերժ Սարգսյանը և Վահան Հովհաննիսյանը: Ինչ վերաբերում է մնացած կուսակցություններին և թեկնածուներին, չնայած մոնիտորինգը չի բացահայտել գերազանցումներ, այն գտել է որոշակի անհամապատասխանություն ԿԸՀ ներկայացված և դրա ինտերնետային կայքում զետեղված ընտրական ֆոնդերի վերջնական զեկուցագրերի և մոնիտորինգի արդյունքում Transparency International-ի կողմից բացահայտած թվերի միջև: Այս մոնիտորինգային նախագծի իրականացման ընթացքում աշխատակազմը ստացել է մի շարք ահազանգեր

ձայների լայնամասշտաբ գնման դեպքերի վերաբերյալ, հիմնականում իշխող կուսակցությունների և նրանց նախագահության թեկնածուների կողմից: Այնուամենայնիվ, քանի որ ակնատեսները խուսափում են վկայություն տալուց, այդ փաստերի ձևակերպումն ու այդ կարգի <<ծախսերի>> հաշվառումն անհնար է դառնում:

Որպես ընտրարշավների ժամանակ վարչական ռեսուրսի չարաշահման օրինակներ կարելի է նշել բարձրաստիճան պաշտոնյաների գործունեության լուսաբանումը նրանց աշխատանքային ժամերին, քարոզարշավի նպատակով գրասենյակային պիտույքների և մեքենաների օգտագործումը, պետական ծառայողների հանդեպ ճնշումների կիրառումը իշխող կուսակցություններին և նրանց թեկնածուներին ընտրելու նպատակով, և այլն:

Մոնիտորինգի կարևոր արդյունքներից մեկն էլ այն է, որ դրա արդյունքներն օգտագործվել են որոշ ընդդիմադիր կուսակցությունների կողմից՝ ընտրությունների արդյունքները վիճարկելու նպատակով Սահմանադրական դատարանին ուղղված դիմումներում:

Transparency International հակակոռուպցիոն կենտրոնը 2009թ. առաջին քառորդում կտպագրի իր կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքների զեկույցը:

### **Եվրոպական հարևանության քաղաքականություն**

Գործընկերությունը Եվրոպական Հարևանության Քաղաքականությունը (ԵՀՔ) համարում է բացառիկ հնարավորություն Հայաստանում ժողովրդավարական, քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ իրականացնելու համար և պահպանում է իր առաջատար դերը ԵՀՔ իրականացման վերաբերյալ քաղաքացիական հասարակության դիրքորոշման ձևավորման հարցում: Մեր տեսանկյունից Արևելյան գործընկերության ֆորմատի ներմուծումը հավելյալ կարևորություն կհաղորդի ԵՀՔ-ը ընդհանրապես և դրա քաղաքական տարրին մասնավորապես: Մենք գտնում ենք, որ ԵՀՔ մեջ ընդգրկված երկրների հանդեպ այս տարբերակված վերաբերմունքը, որը միավորել է ԵՄ մի շարք անդամների, խոստանում է ավելի կանոնավոր մոտեցում Գործողությունների ծրագրի ժողովրդավարեցման գործընթացի հանդեպ՝ ԵՄ չափանիշներին և պարտավորություններին համապատասխան:

ԳՀԲՀ պարբերաբար մասնակցել է Հայաստանում ԵՀՔ գործընթացին: Սկսած Հայաստանում ԵՀՔ իրականացման սկզբնական փուլերից, այսինքն՝ <<Երկրի զեկույցի>> մշակումից, ԳՀԲՀ-ն խիստ շահագրգիռ է եղել ԵՀՔ գործընթացն առաջ մղելու և դրան աջակցելու հարցում: Այն կազմակերպել է հանրային քննարկում <<Երկրի զեկույցի>> և դրա գերակայությունների վերաբերյալ, ինչից հետո ակտիվ դերակատարություն է ստանձնել Գործողությունների ծրագրի կոնցեպտուալացման և մշակման հարցում: Չնայած նրան, որ քաղաքացիական հասարակության և պատկան կառավարական մարմինների միջև համագործակցությունը չի կայացել, ԳՀԲՀ անդամները, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, կենտրոնացել են որոշակի գերակա ճյուղերի

վերլուծության և ԳԾ համար առաջարկությունների մշակման հարցի շուրջ: Արդյունքում, պատրաստվել և Հայաստանի կառավարությանը, Եվրահանձնաժողովին ու հայ հասարակությանն է ներկայացվել առաջարկությունների փաթեթ օրենքի գերակայության, դատական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, տեղեկատվության, մամուլի և խոսքի ազատության իրավունքի, տեղեկատվական հասարակության, փոքրամասնությունների իրավունքների և տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ: Շատ հուսադրող էր տեսնելը, որ որոշ առաջարկներ ընդգրկվել են 2006թ. ստորագրված վերջնական ԳԾ-ում:

Այդ ժամանակաշրջանից ԳՀԲՀ անդրադարձել է ԵՀՔ ԳԾ յուրաքանչյուր քայլին՝ պնդելով իր սկզբնական դիրքորոշումը, որ ԵՀՔ գործընթացը պետք է լինի ներառական գործընթաց, որը բաց կլինի բոլոր շահառուների համար: Այդպիսով, քաղաքացիական հասարակության փորձագետները վերլուծել են Հայաստանի կառավարության կողմից պատրաստված և 2007թ. սեպտեմբերին հրապարակված 2007թ. իրականացման փաստաթղթերը՝ համեմատելով դրանք ԳԾ հետ, և հանդես եկել կոնկրետ առաջարկություններով ծրագրման և իրականացման գործընթացն արդյունավետ, ամբողջական և շահառուների համար հաշվետու դարձնելու վերաբերյալ: ԳԾ իրականացման մեկ տարվա ընթացքում քաղաքացիական հասարակության փորձագետներն ուսումնասիրել են 2007թ. որոշակի գերակա ոլորտներում գործողությունների իրականացման առաջընթացը և մինչ ԵԽ-ը կհրապարակեր Առաջընթացի զեկույցը, մշակել են մի շարք առաջարկություններ Հայաստանի կառավարության և նրանց ԵԽ գործընկերների համար: Փորձագետները քննադատորեն են անդրադարձել ԵԽ կողմից 2008թ. ապրիլին հրապարակված Հայաստանին վերաբերող Առաջընթացի զեկույցի ընդհանուր առմամբ դրական գնահատականին, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ զեկույցն անդրադարձ է կատարել խորհրդարանական և նախագահական ընտրություններին: Արդյունքում կատարվել է ֆորմալ ուսումնասիրություն՝ ԳՀԲՀ համար առանցքային ոլորտներում առաջխաղացման վերաբերյալ քաղաքացիական հասարակության փորձագետների տեսակետը համեմատելով ԵԽ գնահատման հետ:

2008թ. նոյեմբերին փորձագետները պատրաստել են իրենց տեսակետները որոշակի գերակա ոլորտներում երկրի արձանագրած առաջընթացի վերաբերյալ: Թեև նույնն էր մոնիտորինգի մեթոդոլոգիան, 2008թ. իրականացման փաստաթղթերի բացակայության պատճառով տարբեր էր գործընթացը: Քանի որ փաստաթղթի գոյություն ունեցող նախագիծը չի ներկայացվել քաղաքացիական հասարակությանը և պաշտոնապես եղել է փակ փաստաթուղթ, մեր ելման կետը եղել է ԳԾ-ը և 2007թ. իրականացման փաստաթղթերը, հաշվի առնելով այն փաստը, որ 2007թ. իրականացման փաստաթղթերով նախանշված գործունեության մեծ մասը չի իրականացվել:

## **Հագարամյակի մարտահրավերներ ծրագիր**

Գործընկերությունը շարունակել է իր ակտիվ և պարբերական գործունեությունը ՀՄԾ – հայաստանյան նախագծի իրականացման շրջանակներում, որը միակ զարգացման նախագիծն է, որն ուղղակիորեն կախված է երկրում ժողովրդավարական առաջընթացից: ՀՄԾ մոնիտորինգային գործունեության մեջ ներգրավված են եղել Գործընկերության անդամ երկու կազմակերպություն՝ Transparency International հակակոռուպցիոն կենտրոնն իրականացրել է պետությունների մոնիտորինգ, իսկ Համայնքների ֆինանսիստների միավորում կազմակերպությունն ուսումնասիրել է ճանապարհաշինական փորձնական նախագծի իրականացման ընթացքը:

Մինչ 2008թ. սեպտեմբեր ամիսը Գործընկերությունն իր անդամ երեք կազմակերպությունների՝ «Ասպարեզ» լրագրողական ակումբի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի և Սախարովի հիմնադրամի միջոցով, անմիջական ներկայացուցչություն է ունեցել ՀՄԾ շահառուների կոմիտեում՝ խորհրդակցական մարմնում, որն ապահովում է քաղաքացիական հասարակության մասնակցությունը ծրագրի իրականացմանը և ներկայացնում է տարբեր շահառուների խմբերի: Այս կազմակերպությունները իրականացրել են լայնամասշտաբ քարոզչական ջանքեր՝ ուղղված ՀՄԾ իրականացման վերաբերյալ բանավեճերը և տեղեկատվությունը մայրաքաղաքի սահմաններից դուրս բերելու և որոշումների կայացման գործընթացում նախագծից օգտվողների ձայները լսելի դարձնելու ապահովմանը: Իրենց անդամության միջոցով նրանք բարձրացրել են շահառուների կոմիտեում և կառավարման խորհրդում առկա շահերի բախման լուրջ հարցը և պայքարել դրա դեմ: Այնուամենայնիվ, նկատի ունենալով այն լուրջ դիմադրությունը, որն առկա է կոմիտեի մյուս անդամների կողմից, ինչպես նաև գործարքների գնալու ավանդական նկրտումները, այս կազմակերպությունները դուրս են եկել կոմիտեի կազմից՝ իրենց որոշումը պատճառաբանող հայտարարությամբ հանդես գալուց հետո (հայտարարության տեքստը՝ տե՛ս համապատասխան բաժնում):

## **Ճանապարհաշինության մոնիտորինգ**

Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ) «Բաց Հասարակության Ինստիտուտ Օժանդակության Հիմնադրամ – Հայաստան» - ի ֆինանսավորմամբ իրականացրել է «Հագարամյակի Մարտահրավերներ Հայաստան» (ՀՄՀ) ծրագրում ընդգրկված ճանապարհաշինարարական աշխատանքների մոնիտորինգի» ծրագիր:

Ծրագիրը սկսվել է 2006թ.-ի դեկտեմբերին, և նախատեսվում էր այն ավարտել առաջիկա ինն ամիսների ընթացքում, սակայն ծրագիրը փաստացի ավարտվել է 2008թ.-ի հոկտեմբերին: Ծրագրի երկարաձգման պատճառները հիմնականում պայմանավորված են եղել ՀՄՀ-ի կողմից ճանապարհաշինարարական աշխատանքների մեկնարկի ուշացումով և տեխնիկական բնույթի որոշակի ձգձգումներով, ինչպես օրինակ՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի (ՆՆՓ) փաթեթի պատրաստում, ձևեռային

Ժամանակահատվածում շինարարական աշխատանքների ժամանակավոր դադար և այլն:

Մոնիտորինգի աշխատանքների սկսման պահին ՀՄՀ-ը ուներ պատրաստի ընդամենը մեկ ճանապարհի երկու հատվածների ՆՆՓ-եր և շինարարական աշխատանքների մրցույթն անցկացվել էր միայն այդ ճանապարհահատվածների մասով: Այս պատճառով, մեր կողմից իրականացվող մոնիթորինգի առարկա հանդիսացան միայն նշված՝ Հ-17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոմոբիլային ճանապարհի.

1. կմ 49+300 – կմ 60+960 (պայմանականորեն 1-ին հատված) և

2. կմ 60+960 – կմ 73+780 (պայմանականորեն 2-րդ հատված) ճանապարհահատվածների շինարարությունները:

Անհրաժեշտ է նշել, որ այս ճանապարհահատվածները անցած տարիներին սկսված՝ ՀՀ պետական բյուջեի և Լինսի հիմնադրամի միջոցներով վերակառուցվող Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոմոբիլային ճանապարհի մասն են կազմում:

Նշված ճանապարհահատվածները ընդգրկված են եղել Լինսի հիմնադրամի ճանապարհաշինարարական ծրագրում և դադարեցվել են ֆինանսական միջոցների սակավության պատճառով: Սակայն, այդ ժամանակ նշված հատվածների գծով մրցույթ շահած Թալինի ՃՇԸ-ն պատվիրատուի կողմից ստացել է որոշ գումար (60+60 մլն.դրամ) և 1-ին ու 2-րդ հատվածների գծով կատարել է որոշակի վերականգնման աշխատանքներ (փոսային նորոգում, կամրջի վերանորոգում, կողնակների վերականգնում): Միջոցները տրվել են երկու հատվածների համար հավասարաչափ, սակայն դրանք շինարարի կողմից հավասարապես չեն բաշխվել երկու հատվածների միջև, քանի որ շինարարությունը իրականացնող կազմակերպությունը երկու հատվածների համար նույնն էր, և էական չէր, թե որ մասում են դրանք ծախսվում:

Հետագայում, նշված ճանապարհահատվածները ընդգրկվել են «Հազարամյակի մարտահրավերներ Հայաստան» ծրագրում և առանձին փաթեթներով ներկայացվել մրցույթի: Մրցույթ շահած կազմակերպությունը շահել է միանգամից երկու հատվածների պատվերները, համապատասխանաբար՝ 1.8 և 1.84 մլն. դոլար գումարի չափով (նախկին շինարարական կազմակերպությունը մրցույթը չի շահել): Հարց է առաջանում՝ ի՞նչ կլինե՞ր այն դեպքում, եթե մրցույթի արդյունքներով 1-ին ու 2-րդ հատվածների պատվերները ստանային տարբեր կազմակերպություններ, երբ մոտավորապես նույն նախահաշվային գումարի պայմաններում սպասվելիք աշխատանքների ծավալները այդ հատվածների գծով զգալիորեն տարբերվում են, քանի որ նախնական գումարները հավասարապես չեն բաշխվել երկու հատվածների միջև: Ներկա վիճակում, երբ երկու հատվածների մասով մրցույթը հաղթել է մեկ ընդհանուր շինարար, այս տարբերությունը փոխարացվող է: Սակայն այս հանգամանքը գնումների ընթացակարգի նորմալ անցկացման հետ կապված որոշակի կասկած է հարուցում:

Միաժամանակ, նոր շինարարությունը սկսելուց հետո խիստ դժվար է լինելու պարզել՝ կատարված աշխատանքները նոր են, թե հին, այսինքն՝ դրանք կատարվել են պետբյուջեի և Լինսի հիմնադրամի միջոցներով, թե՛ «Հազարամյակի մարտահրավերներ Հայաստան» հիմնադրամի միջոցներով:

Գործող ճանապարհը կառուցված է անցյալ դարի 70-ական թվականների II կարգի ճանապարհի պարամետրերով և երբևիցե կապիտալ նորոգման չի ենթարկվել: Դա է պատճառը, որ ճանապարհի երթևեկային մասն ու հողային պաստառը լայնական ուղղությամբ չափսերի խախտումներ ունեն: Այսպես, երթևեկային մասի լայնությունը տատանվում է 7,8 –8,4 մ, իսկ կողնակները՝ 1,0–3,5 մ սահմաններում: Վերականգնման նախագծում երթևեկային մասի և կողմնակների լայնությունները հենց այդքան էլ պահպանված են, այսինքն՝ վերականգնումից հետո ճանապարհը որևէ կարգի չի վերագրվի, քանի որ լայնական չափերը նորմերի պահանջներից շեղված են:

Ինչպես ցույց են տալիս թե պատվիրատուի, և թե մեր կողմից կազմակերպված դիտարկումները, վերջին տարիներին նշված ճանապարհահատվածներով անցնող ավտոմոբիլների միջին օրական ինտենսիվությունը կազմում է 122 ավտ./օր: Այսինքն՝ ճանապարհով երթևեկության աճ չի գրանցվում: Եթե նույնիսկ ենթադրենք, որ դիտարկված ճանապարհով երթևեկության ինտենսիվության տարեկան 10% աճ կգրանցվի, ապա 20 տարի անց էլ միջին օրական երթևեկությունը չի գերազանցի 750 ավտ./օր ցուցանիշը, ինչին համապատասխանում է IV կարգի ճանապարհը:

2007թ. <<Ճաննախագիծ>> ՄՊԸ-ի կողմից կազմված և պատվիրատուի կողմից ընդունված նախագիծը, ճանապարհի լայնության և ծածկի կոնստրուկցիայի գծով հաշվարկված են III կարգի ճանապարհի համար, ինչը ֆինանսական հավելյալ ծախսերի առաջացման պատճառ է: Նշված ճանապարհահատվածները կարելի էր նախագծել որպես IV կարգի ճանապարհ, որի արդյունքում տնտեսված միջոցները կուղղվեին այլ ճանապարհների շինարարությանը:

Նկար 1 ում պատկերված վերակառուցվող ավտոճանապարհի աշխարագրական դիրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կարևոր ռազմավարական նշանակություն ունի և հանդիսանում է երկրի՝ մեծությամբ երկրորդ Գյումրի քաղաքը մայրաքաղաքին կապող հիմնական ճանապարհին փոխարինող կարևորագույն ճանապարհ: Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոմոբիլային ճանապարհը անցնում է Հայաստան – Թուրքիա պետական սահմանի երկայնքով, և նրա բարեկարգ վիճակը բնակչության համար ունի նաև կարևոր հոգեբանական նշանակություն: Այսքանով հանդերձ, տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից, կառուցվող ճանապարհից տնտեսության զարգացմանը նպաստող լուրջ խթաններ դժվար է ակնկալել: Նշված ճանապարհը գործուն տրանսպորտային հոսքերի համար հրապուրիչ չէ, այն ավելի երկար է, քան ավանդաբար օգտագործվող ճանապարհները և ճանապարհի տեսակը բնութագրող ցուցանիշով՝ ճանապարհի կարգով ավելի ցածր է: Այս ճանապարհին զուգահեռ, նույն ուղղությամբ գործում է երկաթուղի, որը ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար առավել մատչելի միջոց է և մասնակիորեն լուծում է ճանապարհի երկայնքով տեղաբաշխված մի քանի՝ փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների<sup>1</sup> տրանսպորտային պահանջները:

<sup>1</sup> Վերականգնման ենթակա ճանապարհահատվածի երկայնքով տեղակայված են հինգ գյուղական համայնք (Աղին, Չայկաձոր, Բագրավան, Թլիկ և Գետափ): Բացի դրանից, երեք բնակավայր (Խարկով, Ջրափի և Անիպենձա) անմիջականորեն ճանապարհին չեն հարում, սակայն կապված են նրա հետ:

Բերված փաստերը հիմք են հանդիսանում կասկածելու Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոմոբիլային ճանապարհի դիտարկվող հատվածների վրա լուրջ կապիտալ ներդրումների կատարման տնտեսական հիմնավորվածությանը:

Դիտարկվող ճանապարհահատվածները Արմավիր-Գյումրի ճանապարհի նվազ բեռնալարված տեղամասերն են: Ճանապարհին զուգահեռ անցնում է նաև երկաթուղին, որի աշխատանքը բեռանփոխադրումների գծով վերջին տարիներին զգալի աճել է: Ուստի կարելի է ենթադրել, որ ճանապարհով փոխադրումների ծավալի զգալի աճ, թե մոտակա, և թե ապագա տարիներին չի սպասվում: Հետևապես, նպատակահարմար կլիներ ճանապարհային ծածկի վերկանգնման այլընտրանքային մեկ այլ տարբերակ փնտրել<sup>2</sup>, որը կապահովեր նախագծով նախատեսված 20 տարվա ծառայության ժամկետը, ավելի պակաս կապիտալ ներդրումների և ընթացիկ վերանորոգման գումարների հատկացման պայմաններում:

Ըստ <<Ճաննախագիծ ինստիտուտ>> ՄՊԸ-ի 2007թ. կազմած նախագծի, դիտվող ճանապարհահատվածի վերականգնման համար պետք էր կատարել 4633մ<sup>2</sup> փոսային նորոգում և 8502մ<sup>2</sup> պատվածքի ամբողջ լայնությամբ վերականգնում: Մեկ տարի անց, 2008թ. մեր (ՀՖՄ) փորձագետների գնահատմամբ այդ ցուցանիշների համապատասխան գումարային ծավալը կազմել է 14629մ<sup>2</sup>: Այս տարբերության պատճառ կարող է հանդիսանալ ճանապարհի նախագծման ժամանակ առկա իրավիճակի և մեկ տարի հետո փաստացի իրավիճակի տարբերությունը (2007-2008թ.թ-ի խստաշունչ ձմեռվա ազդեցություն), սակայն չեն բացառվում նաև նախագծման աշխատանքներում տեղ գտած հնարավոր անճշտությունները: Այս հանգամանքը որոշակիորեն ազդելու է վերանորոգման աշխատանքների ծավալների վրա և մեծացնելու է կապիտալ ներդրումների ծավալը:

Մեր մոնիտորինգի այս և այլ մանրամասները ամբողջական զեկույցի տեսքով կարելի է գտնել [www.partnership.am](http://www.partnership.am) կայքում:

### **Պետական գնումների մոնիտորինգ**

Քանի որ պետական գնումները կազմում են երկրի ՀՆԱ-ի 60-70 տոկոսը, գնումների գործընթացի հանրային մոնիտորինգը խիստ կարևորություն է ձեռք բերում կառավարության դրամական ծախսերի թափանցիկությունն ու հաշվետու լինելն ապահովելու տեսակետից: 235.65 միլիոն ԱՄՆ դոլարի չափով աջակցության գումարով նախատեսվում է մասնավորապես շինարարության ոլորտին առնչվող մի շարք ծառայությունների և աշխատանքների ձեռք բերում: Նշյալ ոլորտը, Transparency International (ԹԻ) հակակոռուպցիոն կենտրոնի տվյալների համաձայն, ողջ աշխարհում ենթակա է կոռուպցիայի բարձր վտանգի: Այդպիսով, ԹԻ-ն շարունակել է Հազարամյակի Մարտահրավերներ ծրագրի շրջանակներում պետական գնումների մոնիտորինգը:

<sup>2</sup> Որպես օրինակ կարելի է դիտարկել ծածկի փոսային նորոգում և մակերևութային մշակում:



*Transparency International հակակոռուպցիոն կենտրոն*

2007թ. ընթացքում Transparency International հակակոռուպցիոն կենտրոնը ԲՀԻՕՀ հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ, իրականացրել է Հայաստանում պետական գնումների մոնիտորինգ՝ այս ոլորտում թափանցիկությունը և հաշվետու լինելը խթանելու նպատակով: Մոնիտորինգի համար ընտրվել է երկու հիմնական թիրախ՝ Հայաստանում պետական գնումների համակարգը և Հազարամյակի Մարտահրավերների ծրագրի հայաստանյան նախագիծը:

Ազգային պետգնումների համակարգն ուսումնասիրվել է Mapping Public Procurement System մեթոդոլոգիայով, որը մշակվել է Transparency International –ի կողմից և ուղղված է համակարգում կոռուպցիոն ռիսկերի որոշմանն ու դրանց գնահատմանը: Ուսումնասիրությունը կատարվել է 139 չափորոշիչների հիման վրա, որոնք խմբավորվել են 4 դասակարգով՝ ինստիտուցիոնալ, գնահատման, իրականացման և կոնտեքստուալ: Ինստիտուցիոնալ չափորոշիչներն ուսումնասիրվել են իրավական հետազոտությունների, գնահատման չափորոշիչները՝ կենտրոնացված խմբի քննարկման և տարբեր ոլորտներում 43 գնման փաթեթների ուսումնասիրման, իրականացման չափորոշիչները՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված վիճակագրական տվյալների, իսկ կոնտեքստուալ չափորոշիչները՝ միջազգային կառույցների զեկույցների հիման վրա, ինչպիսիք են Գլոբալ մրցակցային զեկույցը և Համաշխարհային զեկույցի Տնտեսական Ազատության բաժինը:

Օրենսդրության և գերատեսչությունների ուսումնասիրումը ցույց է տվել համեմատաբար ցածր կոռուպցիոն ռիսկեր, մինչդեռ ռիսկերի բարձր մակարդակ է բացահայտվել իրական պրակտիկայում և Հայաստանում քաղաքական համակարգի, բյուրոկրատիայի և դատական համակարգի ընդհանուր համատեքստում: Transparency International-ը մշակել է առաջարկությունների փաթեթ՝ գործողությունների թափանցիկությունը բարձրացնելու, կոռուպցիայի կանխարգելումը և վերահսկումը ապահովելու վերաբերյալ:

Մոնիտորինգի երկրորդ մասն ուսումնասիրել է ՀՄԾ շրջանակներում իրականացված պետական գնումները, որը նպատակ է հետապնդել գնահատել դրանց թափանցիկությունը և գնման գործընթացների համապատասխանությունը Հազարամյակի Մարտահրավերների Կորպորացիայի և Հայաստանի կառավարության միջև ստորագրված Ծրագրին և համապատասխան Գնման համաձայնագրին:

Մոնիտորինգի մեթոդոլոգիայով ենթադրվում է գնման ընթացքի որոշակի փուլերի ուսումնասիրում, այդ թվում՝ գնման համար կիրառվող ուղենիշները, գնման ծրագրում, մրցույթների պատրաստումը, մրցութային ընթացակարգերը և գնահատումը: Եզրակացությունները կազմվել են Հազարամյակի Մարտահրավերների Կորպորացիայի և ՀՄԾ Հայաստանի նախագծի ինտերնետային կայքերի ընթացող մոնիտորինգի հիման վրա , ՀՄԾ-Հայաստան նախագծի գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթղթերի ուսումնասիրության և դիմում-առաջարկներ ու գնահատող զեկույցներ ընդգրկող մրցութային փաստաթղթերի 8 փաթեթների վերլուծության հիման վրա: Մոնիտորինգը բացահայտել է որոշ փոքր թերություններ ողջ գործընթացում և մշակել է

առաջարկություններ ՀՄԾ-Հայաստանի համար՝ պետզնումների գործընթացը և դրանց թափանցիկությունը բարելավելու վերաբերյալ:

Մոնիտորինգի արդյունքներն ամփոփվել և հրատարակվել են “Mapping Public Procurement System in Armenia” և “MCA-Armenia Procurement Monitoring Report – 2007” գրքույկներում:

### **Դատարանների մոնիտորինգ**

Մոնիտորինգն անցկացվել է Զարգացման հայկական գրասենյակի կողմից՝ Հիմնադրամի աջակցությամբ: Դրա նպատակը քրեական ընթացակարգերին առնչվող օրենսդրության մեջ առկա արգելքների, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի դրույթների իրականացումը կասեցնող վարչարարական խոչընդոտների բացահայտումն է: Արդյունքում մշակվել են առաջարկություններ, որոնք կօգնեն բարձրացնել դատական համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը:

2005 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններն ու լրացումները հիմք հանդիսացան դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի մեկնարկի համար: Այն իրական նախադրյալներ ստեղծեց ազգային օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում իրավական նոր նորմերի և չափանիշների ներդրման համար: Վերջինիս նախ և առաջ կապված է Հայաստանի Հանրապետության կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի վավերացման հետ, և Կոնվենցիայի սկզբունքների ու ստանդարտների կիրառումը դատական գործընթացների ժամանակ պետք է դառնա ներպետական օրենսդրության կատարելագործման անբաժանելի մասը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ այդ գործընթացը առանց խնդիրների և հարթ չի ընթանում, ինչն առավելապես արտահայտվում է քրեական արդարադատության ոլորտում: Ներկայումս քրեական արդարադատության գործող համակարգը բնութագրվում է մի շարք բացասական գործոններով: Օրենսդրության անկատարությունից զատ շարունակում են լուրջ խնդիրներ մնալ իրավակիրառող պաշտոնատար անձանց ոչ ադեկվատ վերաբերմունքը տեղի ունեցող փոփոխություններին, ինչը մասնակիորեն բացատրվում է մասնագիտական գործունեության նոր չափանիշներին հոգեբանորեն չհարմարվելով: Բացի այդ, որոշ դատավորների, դատախազների և փաստաբանների մոտ դեռևս ամբողջովին չի ձևավորվել նոր արժեքային համակարգը, ինչը ոչ հազվադեպ զուգորդվում է համապատասխան պաշտոնատար անձանց ոչ կոմպետենտ վարքագծի դրսևորումներով:

Այս պատճառների ամբողջությունը, ինչպես նաև դատական համակարգի նկատմամբ պարբերական մոնիտորինգների անցկացման հնարավորության բացակայությունը նպաստում են այնպիսի իրավիճակների զարգացմանը, ուր վճռորոշ գործոններ են դառնում կոռուպցիան, կախվածությունն ու անձնական կապերը:

Դատավարությունների մոնիտորինգը դատական համակարգի վրա ներագդելու առավել արդյունավետ միջոցներից մեկն է, որը ստիպում է ապահովել անձի արդար դատաքննության իրավունքը: Մոնիտորինգը թույլ է տալիս ոչ միայն հայտնաբերել օրենսդրության թերությունները, արձանագրել իրավական նորմերի խախտումները, դրանց վերլուծության արդյունքում մշակել համապատասխան առաջարկություններ, այլև կանխել դատավարության մասնակիցների նկատմամբ կիրառվող հնարավոր կամայականությունները:

Այս հետազոտությունն անցկացվել է «Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի» և «Հայկական զարգացման ինստիտուտի» կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության դատական համակարգի մոնիտորինգ. արդար դատաքննության իրավունք» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակը ՀՀ դատական համակարգի արդյունավետության և թափանցիկության բարձրացումն է, ինչպես նաև քրեական գործերի քննության և լուծման ընթացքում Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների պահպանումը՝ դատարանների գործունեության դիտարկման և դրա հիման վրա համապատասխան առաջարկությունների և երաշխավորությունների մշակման միջոցով:

Ուսումնասիրությունների հիմքում դրվել են մի շարք օբյեկտիվ չափանիշներ, որոնք հնարավորություն են տվել անկողմնակալ վերլուծության և ամփոփումների արդյունքում վեր հանել քրեադատավարական օրենսդրության թերությունները, ինչպես նաև բացահայտել կազմակերպական բնույթի այն խոչընդոտները, որոնք խանգարում են Եվրոպական Կոնվենցիայի կոնկրետ պահանջների գործնական կիրառմանը:

Հետազոտության անցկացումը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ սահմանադրական փոփոխություններից հետո սկիզբ առած դատաիրավական բարեփոխումները, ինչպես նաև մի շարք նոր օրենքների ընդունումը պետք է իրական նախապայմաններ ստեղծեին քրեական արդարադատության բնագավառում անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար: Դրա հետ մեկտեղ, երկրում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական և հատկապես իրավական վերափոխումները ՀՀ քրեական արդարադատության համակարգն ամբողջական ուսումնասիրելու և նորովի վերագնահատելու հնարավորություն են ընձեռում:

Ցանկացած ժամանակակից պետության առաջնային խնդիրը ոչ միայն մարդու իրավունքների և ազատությունների հոչակումն է, այլև դրանց պաշտպանությունն ապահովող որոշակի երաշխիքների սահմանում: Այդ երաշխիքների համակարգում հիմնական դերը պատկանում է այն մեխանիզմների ամբողջությանը, որոնք օժանդակում են երկրում արդարադատության արդյունավետ իրականացմանը: Այս գործոնը արտացոլում է ոչ միայն պետության իրավական և սոցիալական էությունը, ժողովրդավարության զարգացման մակարդակը, այլև անձի պաշտպանվածության աստիճանը տարբեր իրավահարաբերություններում: Այս կապակցությամբ անհրաժեշտ է

նշել, որ նոր Սահմանադրության և օրենքների գործողության պայմաններում արդարադատության արդյունավետ իրականացմանը նպաստող մեխանիզմները վերջնականապես մշակված չեն, իսկ առանձին դեպքերում օրենքի նորմերն ուղղակիորեն խոչընդոտում են արդարադատության իրականացմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը:

Հաշվի առնելով դատարանների գործունեության ոչ բավարար թափանցիկությունը և դրա հետ կապված՝ բնակչության շրջանում դատարանների և նրանց կողմից իրականացվող արդարադատության նկատմամբ ձևավորված անվստահության մթնոլորտը, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել գործող օրենսդրության շարունակական կատարելագործում, բացահայտել և վերացնել այն տեսանկյունի և անտեսանելի պատճառները, որոնք խոչընդոտում են արդարադատության պատշաճ իրականացմանը՝ պայմաններ ստեղծելով անձի իրավունքների և օրինական շահերի չարդարացված խախտումների կամ սահմանափակումների համար:

### **Խորհրդարանի մոնիտորինգ**

Նկատի ունենալով 2007թ. խորհրդարանական ընտրությունների շրջանում թեմատիկ բանավեճերի բացակայությունը, Գործընկերությունն անհրաժեշտ է համարել պարզել իշխող կուսակցությունների տեսակետները հարցերի լայն շրջանակի վերաբերյալ, ինչն իրականացվել է տարբեր ոլորտներ ներկայացնող ԳՀԲՀ փորձագետների օգնությամբ: Արդյունքում տպագրվել և հասարակությանն է ներկայացվել հարցազրույցներից քաղված պատասխանները պարունակող զեկույց: Ձեռքի տակ ունենալով կուսակցությունների ընտրական պլատֆորմները՝ 2007թ. խորհրդարանական ընտրություններից հետո Գործընկերությունը որոշել է մեկ քայլ առաջ տանել նախագիծը և համեմատել Ազգային Ժողովում ներկայացված քաղաքական կուսակցությունների նախընտրական խոստումները նրանց իրական քայլերի հետ: Այդպիսով նախագիծը վերաճել է 4-րդ գումարման Ազգային Ժողովի աշնանային նստաշրջանի մոնիտորինգային նախաձեռնության: Նախագիծն իրականացվել է լրագրողների թիմի կողմից՝ յուրաքանչյուր ոլորտի մասնագետների հետ համատեղ, որոնք վերլուծել են օրենքները: Նախագծի արդյունքում մոնիտորինգի են ենթարկվել հետևյալ օրենքները.

- Պարզեցված հարկի մասին օրենքի փոփոխությունները,
- Հեռուստա- և ռադիոհեռարձակման մասին օրենքի փոփոխությունները,
- Հետախուզության հատուկ ծառայությունների մասին ՀՀ օրենքը,
- Քրեական հետաքննության մասին օրենքը,
- Վարչական դատավարությունների մասին օրենքը,
- Քաղաքացիական դատավարությունների մասին օրենքի փոփոխությունները,
- Քրեական դատավարությունների մասին օրենքի փոփոխությունները,
- 2008թ. բյուջեի մասին օրենքը
- Ընտրական օրենսգրքի փոփոխությունները,
- Երևան քաղաքի մասին օրենքի նախագիծը:

Ընտրական պլատֆորմներն ուշադրության են արժանանում միայն նախընտրական շրջանում: Մինչդեռ ընտրություններից հետո այդ պլատֆորմները կորցնում են իրենց կարևորությունը և դառնում են երկրորդական: Կուսակցություններն անդրադառնում են իրենց պլատֆորմներին միայն <<երբ ծագում է դրա անհրաժեշտությունը>>:

2007թ. մայիսի 12-ին Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում 5 քաղաքական ուժեր մուտք են գործել Ազգային Ժողով և գալիք 4 տարիների ընթացքում պետք է շարունակեն աշխատել իրենց նախընտրական ծրագրերի իրականացման ուղղությամբ (բացառությամբ արտահերթ ընտրություններ անցկացնելու դեպքի):

<<Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության մոնիտորինգ>> նախագծի շրջանակներում մենք հետևել ենք 4-րդ գումարման Ազգային ժողովի աշնանային նստաշրջանի ընթացքում իրականացված գործունեությանը: Աժ խմբակցությունների օրենսդրական գործունեությունն ուսումնասիրվել է նրանց նախընտրական պլատֆորմների հետ համեմատելու եղանակով:

Նախագիծն իրականացրել է լրագրողներից և փորձագետներից կազմված թիմը: Լրագրողների խումբը հետևել է Աժ աշնանային նստաշրջանի աշխատանքներին, տեղեկատվություն հավաքել մոնիտորինգի ենթակա օրենքների նախագծերի վերաբերյալ, ներկայացրել Աժ քննարկումների ժամանակ խմբակցությունների հնչեցրած դիրքորոշումը և համեմատել դրանք իրենց պլատֆորմներում ներկայացված մոտեցումների հետ: Փորձագետների խումբն իր մասնագիտական վերլուծություններն է ներկայացրել օրենքների նախագծերի վերաբերյալ:

Մոնիտորինգի ենթարկված օրենքի յուրաքանչյուր նախագծի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է նույն կառուցվածքով՝ երեք բաժնով: Առաջինը պարունակում է ընդհանուր տեղեկատվություն օրենքների նախագծերի վերաբերյալ, երկրորդը ներկայացնում է այն դիրքորոշումները, որոնց հիման վրա Աժ խմբակցությունները հաստատել կամ մերժել են որոշակի օրենսդրական նախաձեռնություններ: Դրանք համեմատվել են պլատֆորմներում ներկայացված մոտեցումների հետ: Երրորդ բաժնում համապատասխան ոլորտների մասնագետների վերլուծություններն են:

### **Բանակի մոնիտորինգ**

Մարդու իրավունքների պաշտպանությունը և դրա բարելավումը միշտ եղել են Գործընկերության ուշադրության կենտրոնում: Հայաստանի միջազգային պարտավորությունները բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը դարձնում են երկրի բարեփոխումների գործընթացի կարևոր բաղադրամաս: 2007թ.

Գործընկերությունն անդրադարձ<sup>3</sup> կատարեց զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ երկրի միջազգային պարտավորություններին:

Էլեյն Կոնկևիչ

Ընդհանուր առմամբ զինված ուժերի անդամների իրավունքների պաշտպանությունը համեմատաբար նոր թեմա է և այդ մասին շատ բան չի գրվել: Միայն վերջին մի քանի տարիների ընթացքում է, որ այդ թեման խորությամբ է դիտարկվում, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության կողմից:

Մարդու իրավունքների պարտավորությունների ոլորտում Հայաստանը իրավական և քաղաքական պարտավորություններ ունի, որոնք տարածվում են զինված ուժերի վրա: Ի միջի այլոց, որպես Եվրոպայի Խորհրդի և ԵԱՀԿ-ի անդամ՝ Հայաստանը պարտավոր է գործել իր միջազգային պարտավորությունների համաձայն: Այս ուսումնասիրության նպատակը զինված ուժերում մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի միջազգային պարտավորությունների ուրվագծումն է՝ կատարելով առաջարկություններ կամ երաշխավորություններ այդ պարտավորությունները կատարելու և դրանց կատարմանը աջակցելու եղանակների վերաբերյալ:

Միջազգային նորմերը թելադրում են, որ զինված ուժերի աշխատակազմերը պետք է համարվեն «համազգեստով քաղաքացիներ»:<sup>3</sup> Սա նշանակում է, որ զինված ուժերում ծառայող անձինք ունեն ճիշտ նույն իրավունքները, ինչ որ մյուս քաղաքացիները: Կան միայն փոքրաթիվ որոշ սահմանափակումներ՝ կախված նրանց կողմից իրականացվող ռազմական ծառայության բնույթից:

Հավասարապես ընդունելի է, որ միայն այն զինված ուժերի անդամները, որոնց իրավունքները հարգված և պաշտպանված են, առավել լավ կիրականացնեն իրենց պարտականությունները՝ որպես պետության դերակատար խթանելով և պաշտպանելով նաև այլոց իրավունքները: Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը ոչ միայն բարձրացնում է վստահությունը և առավել արդյունավետ է դարձնում բանակը, այլ նաև բնակչության շրջանում բարելավում է ուժի վարկանիշը՝ զինված ուժերի համար հեշտացնելով իր առաջադրանքների իրականացումը:

Միջազգային, հասարակական (տեղական և միջազգային) կազմակերպությունների և ԱՄՆ պետական դեպարտամենտի հաշվետվությունները ցույց են տալիս, որ մարդու իրավունքների իրավիճակը զինված ուժերում մտահոգության տեղիք է տալիս: Այս հաշվետվությունները ցույց են տալիս, որ չարաշահումներ տեղի են ունենում

<sup>3</sup> «Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն ու Հայաստանի միջազգային պարտավորությունները», 2007թ., տե՛ս [www.partnership.am](http://www.partnership.am) կայքը

Հայաստանի ողջ բանակում՝ ներառելով ոտնձգություններ, արարողակարգեր <<նոր>> ծառայողների համար (<<դեղովչիհնա>>)/արժանապատվության նսեմացում, կոռուպցիա, չարաշահումների դատապարտման բացակայություն և կենցաղային վատ պայմաններ [և այլ խնդիրների մանրամասներին կարելի է ծանոթանալ բանակի մասին հաշվետվությունից]: Բացի այդ, համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարումը դեռևս մտահոգիչ է, քանի որ Հայաստանը դեռևս չի բավարարել Եվրոպայի խորհրդի առջև այս մասով ունեցած իր պարտավորությունները:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել զինված ուժերում մարդու իրավունքների իրավիճակը բարելավելու ուղղությամբ, սակայն դեռևս շատ բան կա անելու:

### **Ժողովրդավարության մոնիտորինգ**

Սկսած 2001թ.-ից, երբ Հայաստանը դարձավ ԵԽ անդամ, ԳՀԲՀ մի շարք անդամ կազմակերպություններ շարունակաբար իրականացրել են երկրում ժողովրդավարության առաջընթացի մոնիտորինգ: 2006թ. Հազարամյակի Մարտահրավերների Կորպորացիան Հայաստանի հետ ստորագրել է \$236.65 միլիոն դրամ արժողության 5-ամյա ծրագիր, որը մեծապես կախված է երկրի՝ մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտներում որոշակի չափանիշների համապատասխանելուց: Այդպիսով, ԳՀԲՀ մի խումբ անդամներ, Երևանի Մամուլի ակումբի գլխավորությամբ, իրականացրել են ՀՄԾ չափանիշներով ՝ Արդար կառավարում ՝ ոլորտի մոնիտորինգ: ՀՄԾ ընտրության չափանիշները բաժանվել են հետևյալ բաժինների. քաղաքացիական ազատություններ, քաղաքական իրավունքներ, ձայն և հաշվետվություն, կառավարման արդյունավետություն, օրենքի գերակայություն և կոռուպցիայի վերահսկում: Մոնիտորինգը, որը գլխավորում էր Երևանի Մամուլի Ակումբը, իրականացվել է Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, <<Համագործակցություն հանուն ժողովրդավարության>> կենտրոնի, <<Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի>>, Համայնքային ֆինանսիստների միավորման և Transparency International հակակոռուպցիոն կենտրոնի կողմից:

### *Երևանի Մամուլի Ակումբ*

Երևանի մամուլի ակումբը և <<Թիմ>> հետազոտությունների կենտրոնը, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ, իրականացրել է 2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունների լուսաբանման մոնիտորինգ հայաստանյան ՁԼՄ-ների շրջանում: Այն ընդգրկել է թե՛ պաշտոնական քարոզարշավը, այսինքն՝ այն շրջանը, որը նախատեսվում է իրավական կանոնակարգերով և որի ընթացքում միջազգային դիտորդները հետևում են առաջատար ՁԼՄ-ների պահվածքին, և թե՛ քարոզարշավին նախորդող ժամանակաշրջանը, երբ ի հայտ են գալիս մամուլի անկախության հետ կապված հիմնական խնդիրները և որոնք կանոնակարգման շրջանակներից դուրս են, այդ պատճառով չեն արժանանում միջազգային դիտորդների ուշադրությանը:

Խորհրդարանական ընտրությունների ընթացքում ուսումնասիրվել է 18 լրատվամիջոց (14 հեռարձակվող և 4 տպագիր), իսկ նախագահական ընտրությունների ընթացքում՝ 8 հեռարձակվող լրատվամիջոց:

Մոնիտորինգը նպատակ ունի պարզել ու բացահայտել հետևյալը.

- լրատվամիջոցների օրենսդրական կարգավորման արդյունավետությունը ընտրությունների ընթացքում և դրանցից առաջ;
- ընտրությունների հանդեպ հայաստանյան լրատվամիջոցների ուշադրության աստիճանը;
- քաղաքական գործիչների, նախագահական թեկնածուների վերաբերյալ ընտրողներին տրամադրվող տեղեկատվության համաչափությունը;
- քաղաքական գործիչների, կուսակցությունների և թեկնածուների համար հեռուստա- և ռադիոթերի մատչելիությունը՝ իրենց կարծիքներն ու տեսակետներն արտահայտելու նպատակով:

Այս ամենին հասնելու համար կիրառվել են որակական և քանակական մոնիտորինգի մեթոդները: Որակական մոնիտորինգը ներառել է Հայաստանում ընտրական գործընթացների հետ առնչվող օրենսդրության և պաշտոնական այլ փաստաթղթերի ուսումնասիրություն, հանդիպումներ լրատվամիջոցների ղեկավարների, լրագրողների, քաղաքական գործիչների և հասարակության հետ, ինչպես նաև նախընտրական շրջանում լրատվամիջոցների գործունեության վերաբերյալ նրանց պաշտոնական հայտարարությունների վերլուծություն: Քանակական մոնիտորինգն ընդգրկել է լրատվամիջոցների հրապարակումների և ծրագրերի ուղղակի չափագրումներ:

Մոնիտորները ձայնագրել են մեջբերումներ, դրանց ենթատեքստը/բնույթը (դրական, բացասական, չեզոք), ինչպես նաև կուսակցություններին/թեկնածուներին հատկացված եթերաժամը/թերթի տարածքը: Ուսումնասիրությունների արդյունքում արված միջանկյալ և վերջնական բացահայտումները ներկայացվել են մամուլի ասուլիսների ընթացքում: Վերջնական զեկույցները տպագրվել են նաև բրոշյուրների տեսքով, որոնք պարունակել են նաև այլ նյութեր ընտրությունների ընթացքում մամուլի վերաբերյալ:

Մոնիտորինգը և բացահայտումների լայն հրապարակումը բավականին ուժեղ ներգործություն է ունեցել հետևյալ պատճառներով.

8. Դրանք մատնանշել են հայաստանյան մամուլում առկա խնդիրները և օգնել են գտնել դրանց արձագանքման ուղիները (թե՛ ընտրաշրջանում և թե՛ դրանից հետո);
9. Մոնիտորինգի զեկույցները պարունակել են ընտրությունների ընթացքում լրատվամիջոցների վերաբերյալ օրենսդրության կատարման ապահովմանը կոչված պետական մարմինների աշխատանքի գնահատականը՝ այդպիսով



թույլ տալով բարձրացնել ընտրությունների վարչարարության հետ կապված կարևորագույն հարցեր;

10. Ընտրություններին հետևող տեղական և միջազգային կազմակերպությունները վստահելի տեղեկատվություն են ստացել են ընտրական գործընթացներում մամուլի դերի վերաբերյալ;
11. Ուսումնասիրությունների վրա հիմնված առաջարկությունները նպաստել են Հայաստանի ընտրական օրենսդրության բարելավմանը;
12. Ձեկույցներում պարունակվող վերլուծությունը հնարավորություն է տվել վերապատրաստման ծրագրեր մշակել գործող լրագրողների համար, ինչպես նաև նպաստել է լրագրողական ուսումնական հաստատությունների համար ուսումնական դասընթացների մշակմանն ու բարելավմանը;
13. Մոնիտորինգի տվյալները նյութ են հանդիսացել ընտրությունների արդյունքների վիճարկման դատական գործընթացների համար: ՀՀ Սահմանադրական դատարանը և Մարդու իրավունքների պաշտպանը իր հայտարարություններում հղումներ են կատարել ԵՄԱ/ԹԻՄ մոնիտորինգի զեկույցներին;
14. Մոնիտորինգը և դրա արդյունքում արված բացահայտումներն օգնել են ավելի կոնկրետացնել քաղաքացիական հասարակության քարոզչական գործունեությունը լրատվամիջոցների ոլորտում:

Մոնիտորինգը լրատվական համայնքի, հասարակության, քաղաքական շրջանակների և միջազգային դիտորդների ուշադրության կենտրոնում էր: Այն լայնորեն լուսաբանվել է մամուլում, շարունակաբար մեջբերվել և դարձել է կարևորագույն գործոն Հայաստանի հասարակական և քաղաքական կյանքում, այսպիսով իր նպաստը բերելով երկրի ժողովրդավարեցման խնդրին:

### **Փակ և կիսափակ հաստատությունների մոնիտորինգ**

Քրեակատարողական համակարգի Հանրային մոնիտորինգի խորհուրդը, որում Գործընկերությունը ներկայացված է 4 կազմակերպությունների միջոցով՝ Քաղաքացիական Հասարակության Ինստիտուտ, Հելսինկյան Կոմիտե, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ և «Համագործակցություն Հանուն Ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն, շարունակել է իրականացնել մարդու իրավունքների խնդիրների մոնիտորինգ քրեակատարողական հիմնարկներում՝ հիմնականում շեշտը դնելով առողջապահության հետ կապված հարցերին: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրականացրել է մարդու իրավունքների մոնիտորինգ այնպիսի փակ հաստատություններում, ինչպիսիք են հոգեբուժական ինստիտուտները, մանկատները և ծերանոցները: 2008թ.-ից կազմակերպության սկսած գորակոչի ընթացքի մոնիտորինգի

միջոցով այն իր ուժերը կենտրոնացրել է նաև բանակի վրա քաղաքացիական վերահսկողության սահմանման հարցերին: Հիմնադրամի կողմից օժանդակություն ստացող մի շարք ՀԿ-ներ իրականացրել են նաև մարզերում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի մոնիտորինգ:

### *Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից*

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2007թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 16 կամավորների<sup>1</sup> մասնակցությամբ 2007-2008թթ. իրականացվել է մարդու իրավունքների մոնիտորինգներ հետևյալ հաստատություններում:

Իրականացված մոնիտորինգների հեռահար նպատակն էր ***ձևավորել փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների մոնիտորինգի մեխանիզմներ և նպաստել դրանց ներդրմանը ՀՀ-ում:***

Փակ և կիսափակ հաստատություններում իրականացված յուրաքանչյուր մոնիտորինգ ունեցել է իր ռազմավարական նպատակն ու խնդիրները, մասնավորապես.

***2007թ.***

#### ***1. Վանաձորի մանկատուն***

Վանաձորի մանկատանն իրականացված մոնիտորինգը նպատակ ուներ ապահովել ՄԱԿ-ի կոնվենցիայով, ՀՀ <<Երեխայի իրավունքների մասին>> օրենքով նախատեսված երեխայի իրավունքների իրականացումը Վանաձորի մանկատանը:

Իրականացված մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են.

- երեխաների առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններին
- երեխայի արժանապատվությունը նվաստացնող, անմարդկային կամ այլ դժան վերաբերմունքից, պատժից և բռնություններից զերծ մնալու իրավունքի ապահովմանը
- երեխայի կրթության իրավունքի ապահովմանը
- երեխայի անձնական կյանքը հարգելու և անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովմանը առնչվող խնդիրները:

#### ***Ստացված արդյունքները***

Վանաձորի մանկատանը բացահայտված խնդիրների լուծման նպատակով համապատասխան առաջարկություններ մշակելու համար Վանաձորի մանկատան, Լոռու մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտպանության վարչության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցների մասնակցությամբ կայացել է 2 աշխատանքային քննարկում: Աշխատանքային քննարկման արդյունքում մշակվել է 5 կետից բաղկացած առաջարկությունների փաթեթ, որը առաջիկայում ներկայացվելու է ՀՀ կառավարությանը:

Բացի այդ, Վանաձորի մանկատանը ձևավորվել է երեխաներից կազմված կառավարման խորհուրդ, Վանաձորի մանկատանը կազմակերպվում են երեխաներին ապագա ինքնուրույն կյանի քին նախապատրաստելու դասընթացներ:

## **2. Վանաձորի ծերանոց**

Վանաձորի ծերատանն իրականացված մոնիտորինգը նպատակ ուներ ապահովել տարեցների իրավունքների պաշտպանությունը <<Վանաձորի տարեցների տանը>>:

Իրականացված մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են.

- Վանաձորի ծերատանը ծերերի բժշկական օգնություն ստանալու իրավունքի պահպանմանը
- Վանաձորի ծերատանը ծերերի նկատմամբ աշխատակազմի վերաբերմունքին
- սեփականության և անձնական կյանքի իրավունքի պահպանմանը
- Վանաձորի ծերատանը ծերերի կենսապայմաններին վերաբերող խնդիրներ:

## **Ստացված արդյունքները**

Վանաձորի ծերատանը բացահայտված խնդիրների լուծման նպատակով համապատասխան առաջարկություններ են մշակվել և առաջիկայում ներկայացվելու են ՀՀ կառավարությանը:

Բացի այդ, Վանաձորի ծերատանը ընդունել են սոցիալական աշխատողի, Վանաձորի ծերատանը պարբերաբար կազմակերպվում են ժողովներ, որոնց ընթացքում ծերերը բարձրացնում են իրենց հուզող հարցերը և ստանում դրանց պատասխանները:

## **3. Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսեր**

Լոռու մարզի հոգեկայարդարանական դիսպանսերում իրականացված մոնիտորինգի նպատակն էր Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց պահման պայմանների համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին:

Իրականացված մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են.

- հոգեկան խանգարումով տառապող անձանց հոգեկայարդարանական դիսպանսերում պահման պայմաններին
- խոշտանգումներից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի ապահովմանը
- բժշկական օգնություն ստանալու իրավունքի ապահովմանը վերաբերող խնդիրներ:

## **Ստացված արդյունքները**

Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսերում բացահայտված խնդիրների լուծման նպատակով համապատասխան առաջարկություններ մշակելու

համար Լոռու մարզային հոգենյարդարանական դիսպանսերի, Լոռու մարզպետարանի առողջապահության վարչության աշխատակիցների մասնակցությամբ կայացել է 2 աշխատանքային քննարկում: Մինչ այս 2 քննարկումը Լոռու մարզպետարանում մոնիթորինգի արդյունքում վեր հանված խնդիրների պարզաբանման նպատակով տեղի է ունեցել քննարկում մարզպետի տեղակալի, Լոռու մարզպետարանի առողջապահության վարչության պետի և գլխավոր բժշկուհու, Լոռու մարզային հոգենյարդարանական դիսպանսերի տնօրենի և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարի, իրավախորհրդատվական բաժնի համակարգողի և Լոռու մարզային հոգենյարդարանական դիսպանսերի մոնիտորինգը համակարգողի մասնակցությամբ: Աշխատանքային քննարկումների արդյունքում մշակվել է 6 կետից բաղկացած առաջարկությունների փաթեթ, որը առաջիկայում ներկայացվելու է ՀՀ կառավարությանը:

ՀՀ առողջապահության նախարարի կողմից ընդունվել է 6 հրաման, որոնք վերաբերում են մեր կողմից ներկայացված առաջարկություններին:

Իրականացված մոնիտորինգների արդյունքների հիման վրա տպագրվել է *<<Մարդու իրավունքները Լոռու մարզում. Լոռու մարզային հոգենյարդարանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը և Վանաձորի մանկատանն իրականացված մոնիթորինգի արդյունքները>> զեկույցը, որն անգլերեն և հայերեն տարբերակով կարելի է գտնել [www.hcav.am](http://www.hcav.am) էլ. կայքից:*

**2008թ.**

#### **4. <<Վանաձոր>> քրեակատարողական հիմնարկ**

<<Վանաձոր>> քրեակատարողական հիմնարկում իրականացված մոնիտորինգի նպատակն էր նպաստել <<Վանաձոր>> ՔԿՀ-ում Եվրոպական բանտային կանոնների կիրառմանը:

Իրականացված մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են.

- ազատազրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքին
- ազատազրկված անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքին
- <<Վանաձոր>> ՔԿՀ-ում ազատազրկվածների կենցաղային պայմաններին վերաբերող խնդիրներ:

Նախատեսվում է մոնիտորինգի արդյունքում վեր հանված խնդիրների պարզաբանման և խնդիրների լուծման համար առաջարկությունների փաթեթի մշակման նպատակով իրականացնել աշխատանքային քննարկում <<Վանաձոր>> ՔԿՀ-ի աշխատակիցների մասնակցությամբ և փաթեթը ուղարկել ՀՀ կառավարությանը:

#### **5. Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ դպրոց**

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ դպրոցում իրականացված մոնիտորինգի նպատակն էր նպաստել գիշերօթիկ դպրոցում միջազգային չափանիշների լիարժեք կիրառմանը:

Իրականացված մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են.

- խնամքի կենտրոնում երեխաների նկատմամբ անձնակազմի մարդասիրական վերաբերմունքին
- խնամքի կենտրոնում երեխաների պահման պայմաններին վերաբերող խնդիրներ:

Նախատեսվում է մոնիտորինգի արդյունքում վեր հանված խնդիրների պարզաբանման և խնդիրների լուծման համար առաջարկությունների փաթեթի մշակման նպատակով իրականացնել աշխատանքային քննարկում Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ դպրոցի աշխատակիցների մասնակցությամբ և փաթեթը ուղարկել ՀՀ կառավարությանը:

Իրականացված մոնիտորինգի արդյունքների հիման վրա տպագրության է նախապատրաստվում համապատասխան զեկույցը:

### **Եվրոպայի Խորհրդի սկզբունքների և չափանիշների հետ ՀՀ օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքի համեմատական վերլուծություն**

Գործընկերությունը հանձնարարել է մի իրավաբանական կազմակերպության վերլուծել օրենքը՝ ԵՄ սկզբունքների և չափանիշների համատեքստում: Վերջնական զեկույցը լայնորեն տարածվել է և, հիմնվելով համեմատական վերլուծության արդյունքների վրա, կազմակերպվել է քննարկում Գործընկերության կողմից՝ հիմնական առանցքային շահառուների մասնակցությամբ:

<<Օպերատիվ հետախուզական գործունեության մասին>> ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2007թ. հոկտեմբերի 22-ին: Օրենքի հեղինակը ՀՀ կառավարությունն է: Օրենքը կարգավորում է օպերատիվ-հետախուզական գործունեության (այսուհետ՝ ՕՀԳ) իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները: Այն սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների 16 տեսակների սպառիչ ցանկ՝ նախատեսելով, որ ՕՀ միջոցառումները սահմանվում են միայն օրենքով: Հաշվի առնելով, որ մինչ օրենքի ընդունումը ՕՀԳ-ները իրականացվել են, փաստորեն, առանց օրենսդրական կարգավորման, ուստի Օրենքի ընդունումն ինքնին պետք է համարվի նշանակալից քայլ:

Ակնհայտ է, որ Օրենքը կազմելիս հիմք են ընդունվել Եվրոպայի խորհրդի և միջազգային որոշ կարևոր չափանիշներ, օրինակ, միջամտության <<համաչափության>> և անհրաժեշտության գաղափարները, դատական վերահսկողությունը անձնական կյանքի առավել միջամտող բնույթի ՕՀ միջոցառումների նկատմամբ, օրինակ՝ ներքին դիտումը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունների վերահսկումը, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը, կաշառք ստանալ կամ կաշառք տալը առաջարկելը, տեխնիկական միջոցների կիրառմամբ արտաքին դիտումը:

Սակայն, Օրենքը կազմելիս անտեսվել են մի շարք կարևոր միջազգային սկզբունքներ և չափանիշներ, առանց որոնց ՕՀ միջոցառումների կիրառումները կարող են հանգեցնել մարդու իրավունքների լուրջ խախտումների՝ առավել ևս, որ Օրենքում բացակայում են իրավական պաշտպանության արդյունավետ երաշխիքները և մեխանիզմները:

Օրենքը կարգավորում է ինչպես ազգային անվտանգության, այնպես էլ դրա հետ չկապված այլ հանցագործությունների քննության ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեությունը՝ ընդհանրապես որևէ տարանջատում չնախատեսելով այս երկու նպատակների միջև: Սակայն, ժամանակակից ժողովրդավարական չափանիշները պահանջում են խստորեն տարանջատել այս երկու ոլորտները՝ օրենսդրական կարգավորման և ինստիտուցիոնալ հիմքերով: Նշվածից հետևում է, որ Օրենքում պետք է կատարվեն կոնցեպտուալ փոփոխություններ:

Մասնավորապես՝ անհրաժեշտ է տարանջատել ազգային անվտանգության նպատակով և ազգային անվտանգության հետ չկապված հանցագործությունների քննության ընթացքում իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեությունը: Որպես գործունեության խիստ տարբերվող տեսակներ, դրանք պետք է կարգավորում ստանան տարբեր օրենքներով:

Միաժամանակ, օրենքով պետք է բացառվի ազգային անվտանգության մարմինների տեխնիկական միջոցների և ռեսուրսների օգտագործումը ազգային անվտանգության ապահովման հետ չկապված ոստիկանական կամ այլ ծառայությունների կողմից հանցագործությունների քննության ընթացքում:

Օրենքում ընդհանրապես ներկայացված չեն այն չափանիշները, որոնց առկայության դեպքում թույլատրելի է ՕՀԳ իրականացումը: Ցանկացած հանցագործության բացահայտման նպատակով թույլատրվում է իրականացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն առանց սահմանափակման, ինչը ԵՄ չափանիշների համաձայն անթույլատրելի է: Օրենքով նախատեսված յուրաքանչյուր ՕՀ միջոցառման համար պետք է պայման նախատեսվի, թե որ դեպքերում է այն թույլատրելի:

ԵՄ անդամ պետությունների մեծամասնության օրենսդրությունը պահանջում է, որպեսզի դատավորի, դատախազի կամ օպերատիվ հետախուզական միջոցներ կիրառող մարմնի որոշումը լինի պատճառաբանված, պետք է ներկայացված լինեն մի շարք նվազագույն պահանջներ: Օրենքում ներկայացված են օպերատիվ-հետախուզական միջոցառումը թույլատրելու որոշման բովանդակության պահանջները, որոնցում բացակայում են ԵՄ անդամ պետությունների մեծամասնության օրենսդրությամբ նախատեսված մի քանի նվազագույն պահանջներ, որոնց բացակայության պայմաններում անտեսվում են ՄԻԵԿ 8-րդ հոդվածով նախատեսված երկու սկզբունքները՝ իրավաչափությունը և համաչափությունը:

Օրենքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների թիրախ-անձինք սահմանված են միայն մի քանի ՕՀ միջոցառումների վերաբերյալ: Բոլոր ՕՀ միջոցառումների դեպքում օրենքում հստակորեն պետք է մատնանշվեն անձինք, ում նկատմամբ կարող են իրականացվել տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

ԵՄ անդամ մի շարք երկրներում արգելված է մարդկանց որոշ խմբերի նկատմամբ գաղտնի վերահսկում իրականացնել: Օրենքը նման սահմանափակում նախատեսում է միայն որոշ ՕՀ միջոցառումների անցկացման համար, այն էլ անձանց չափազանց նեղ շրջանակի նկատմամբ: Անհրաժեշտ է ընդլայնել ինչպես անձանց շրջանակը, որոնց նկատմամբ չի թույլատրվում իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, այնպես էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակը, որոնք չի թույլատրվում անցկացնել անձանց որոշակի, արդեն մատնանշված շրջանակի նկատմամբ:

Օրենքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների նկատմամբ հսկողություն իրականացնելու մեխանիզմները թերի են, չեն համապատասխանում ԵՄ մի շարք պահանջների: Որպես նվազագույն պայման, անհրաժեշտ է Օրենքով սահմանել ՕՀ միջոցառումն իրականացնելու հստակ ժամկետ, ինչպես նաև պահանջ, ըստ որի ՕՀ միջոցառումը իրականացնող մարմինը պետք է զարգացումների մասին պարբերաբար գրավոր զեկուցի օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարումը թույլատրող մարմնին:

Օրենքով սահմանված են ՕՀ միջոցառումների ժամկետները, համաձայն որի բոլոր միջոցառումների համար որպես ժամկետ սահմանված է 2 ամիսը: Ժամկետների տարբերակված մոտեցում չի ցուցաբերված՝ կախված կոնկրետ միջոցառման տեսակից, ինչը ԵՄ առաջարկած չափանիշներին չի համապատասխանում: Ավելին, ՕՀ միջոցառման իրականացման առավելագույն ժամկետ՝ 12 ամիս, սահմանված է միայն մի քանի ՕՀ միջոցառումների համար: Անհրաժեշտ է տարանջատում մտցնել միջոցառումների անցկացման ժամկետների մեջ՝ կապված մարդու անձնական կյանքին դրանց միջամտության աստիճանից, ինչպես նաև միջոցառումների անցկացման առավելագույն ժամկետ սահմանել բոլոր միջոցառումների անցկացման համար:

Ըստ ԵՄ չափանիշների, քողարկված գործակալների օգտագործման դեպքում հիմնական մտահոգությունը կայանում է, որպեսզի գաղտնի գործակալի գործունեությունը իր մեջ հանցագործության սադրանք չպարունակի, որի դեպքում ձեռք բերված ապացույցի հիման վրա դատավարությունը համարվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Օրենքը ընդհանրապես չի անդրադարձել այս կարևորագույն պահանջին: Օրենքով պետք է հստակ սահմանվի, որ գաղտնի միջոցներ կիրառելիս և քողարկված գործակալներ օգտագործելիս, իրավասու մարմիններին, նրանց գործակալներին և նրանց հետ համագործակցող անձանց արգելվում է քրեորեն պատժելի արարք կատարելը դրդելը կամ սադրելը:

Օրենքը մակերեսորեն է կարգավորում ՕՀ միջոցառումների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները պահելու և ոչնչացնելու կարգը, ինչը չի սահմանափակում անձանց նկատմամբ օդոսայենների հավաքման հնարավորությունը: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է, ինչպես օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա անձին քրեական պատասխանատվության ենթարկելուց, այնպես էլ այդ տեղեկությունների հիման վրա անձի կողմից հանցագործության կատարելը չհիմնավորվելու դեպքում սահմանված կարգով ոչնչացնել ձեռք բերված բոլոր տեղեկությունները:

Օրենքով բացարձակապես սահմանված չէ, թե որ անձը պետք է հնարավորություն ունենա հետագայում տեղեկացվել իր նկատմամբ գաղտնի վերահսկման միջոց կիրառած լինելու փաստի մասին, որը հակասում է ԵԽ պահանջներին, հնարավորություն չի տալիս իրականացնելու արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտ է օրենքով սահմանել, որ անձը, որի նկատմամբ իրականացվել է գաղտնի վերահսկման միջոց, ինչպես նաև անձինք, որոնց անձնական կյանքին տեղի է ունեցել միջամտություն ՕՀ միջոցառման արդյունքում, պետք է տեղեկացվեն նման միջոցառման անցկացված լինելու մասին: Իսկ այն դեպքում, երբ նման տեղեկություն հայտնելը կամ ՕՀ միջոցառման արդյունքները տրամադրելը կարող են վտանգ ներկայացնել մարդկանց կյանքին կամ առողջությանը, կամ ընթացքի մեջ գտնվող քննությանը, կամ առկա է պետական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման վտանգ, կամ երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձինք, ապա միջոցառումն իրականացրած մարմինը ՕՀ միջոցառումների մասին տեղեկությունները կամ ձեռք բերված նյութերը չտրամադրելը թույլատրելու միջնորդությամբ պետք է դիմի դատարան և դատարանը լուծի տեղեկատվությունը և նյութերը տրանսպարենտ-չտրամադրելու, ինչպես նաև տրամադրվող տեղեկությունների և նյութերի ծավալի հարցերը:

Օրենքի համաձայն մի շարք ՕՀ միջոցառման արդյունքները կարող են դիտվել որպես ապացույց: Նշված դրույթը էական հակասություն ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հետ: Անհրաժեշտ է, որպեսզի օրենքում հստակ նշվի, թե որ ՕՀ միջոցառումների արդյունքները կարող են դիտվել որպես ապացույց միայն ՀՀ քր. դատ. օր-ի դրույթներին համապատասխան:

### **Քաղաքացիական հասարակության հմտությունների զարգացում**

Տիրող իրավիճակին արձագանքելու՝ քաղաքացիական հասարակության հապաղումը կարելի է վերագրել մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններին օժանդակելուն ուղղված խիստ և հաստատուն ջանքերի բացակայությանը: Քանի որ Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնությունը իր անդամների համար գերակա հանդիսացող ոլորտների շուրջ միավորված ՀԿ-ների կռալիցիա է, յուրաքանչյուր ոլորտից ընտրվել են առաջատար



կազմակերպություններ՝ իրենց հմտությունները ամրապնդելու և նույն նպատակը հետապնդող այլ կազմակերպությունների միանալու և առաջնորդելու համար:

### **Համալսարանական կրթությամբ կանանց հայկական ասոցիացիա (ՀԿԿՀԱ)**

2007 և 2008թ.թ. նախագծի հիմնական նպատակը նախընտրական և հետընտրական շրջաններում կանանց մասնակցության խթանումն է՝ մասնավորապես խորհրդարանական և նախագահական ընտրությունների համատեքստում: Մա իրականացվել է իգական սեռի բնակչության համար իրենց իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով կրթական գործունեության կազմակերպման միջոցով: ՀԿԿՀԱ-ն համագործակցել է նույն նպատակը հետապնդող այլ հասարակական կազմակերպությունների հետ: Նախագծի իրականացման ընթացքում հիմնվել են մարզային կենտրոններ քաղաքացիական հասարակության կարիքներին ծառայելու և տարբեր հրատարակությունների միջոցով տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

### **Երևանի մամուլի ակումբ (ԵՄԱ)**

Երևանի մամուլի ակումբը ստեղծել է ՁԼՄ ինքնակարգավորման առաջին փորձնական մարմինը՝ ՁԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը, ինչպես նաև դրան միացած լրատվամիջոցների համար գործող Վարքագծի կոդեքսը: Չնայած նախագծի սկզբում միայն 18 ՁԼՄ ներկայացուցիչներ էին ստորագրել Վարքագծի կոդեքսը, 2008-ի ավարտին արդեն ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ՁԼՄ կազմակերպությունների թիվը հասել էր 33-ի: 2007 և 2008թ.թ. ընթացքում Դիտորդ մարմնի ուշադրությանն են ներկայացվել Վարքագծի կոդեքսի և Ընտրությունների ու հանրաքվեների լուսաբանման հոչակագրի ոտնահարման դեպքեր: Նախաձեռնության արդյունքում տպագրվել է երկու տարեկան զեկույց, որոնք պարունակել են ինքնակարգավորման մարմնի վերաբերյալ հիմնական փաստաթղթերը՝ Վարքագծի կոդեքսը և Ընտրությունների ու հանրաքվեների լուսաբանման հոչակագիրը, 2007թ. ՀՀ Ազգային Ժողովում տեղեր ունենալուն հավակնող 23 կուսակցությունների ուսումնասիրություն, Դիտորդ մարմնի կողմից ստացված բողոքների նկարագրություն կոնկրետ դեպքերի մեջբերմամբ, Դիտորդ մարմնի կայացրած որոշումները, ինչպես նաև նյութեր ՁԼՄ ինքնակարգավորման միջազգային փորձի վերաբերյալ: 2008թ. նոյեմբեր ամսին մշակվել է նաև հատուկ ընթացակարգ՝ նախաձեռնության անդամ չհանդիսացող ՁԼՄ կազմակերպությանը հասցեագրված բողոքներին արձագանքելու համար:

### **Հայաստանի հելսինկյան կոմիտե**

Նախագծի նպատակը Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի բարելավումն է՝ մարդու իրավունքների ոլորտում միջազգային լավագույն փորձի քարոզչության միջոցով, միջազգային պարտավորություններին Հայաստանի

համապատասխանության մոնիտորինգը և տեղական ու միջազգային համայնքի իրազեկության բարձրացումը Հայաստանում մարդու իրավունքների ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ: Նախագիծն ընդգրկել է շարունակական մոնիտորինգ, մարդու իրավունքների ոլորտում բարեփոխումների, ԵԽ պարտավորություններին և ԵՀԾ Գործողությունների Ծրագրի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և տարածում: Այս դրամաշնորհի շրջանակներում Հելսինկյան կոմիտեն անվճար իրավաբանական աջակցություն է տրամադրում խոցելի խմբերին, բարձրացնում է մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկությունը <<Դիտորդ>> պարբերականի տպագրման միջոցով և իրականացնում ժողովներ անցկացնելու ազատության, կրոնական փոքրամասնությունների, այլընտրանքային գինձառայության և փակ հաստատություններում անհատների կտտանքների վերաբերյալ իրավիճակի մոնիտորինգ: ՀԿ-ն նպատակ է հետապնդում նաև բարձրացնել մարդու իրավունքների ոլորտում մարզերում գործող կազմակերպությունների հնարավորությունները՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշների վերաբերյալ ուսումնական դասընթացներ անցկացնելու միջոցով: Արդյունքում կոմիտեն մոբիլիզացրել է մարզային երիտասարդությանը՝ 2008թ. դպրոցներում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի մոնիտորինգ անցկացնելու համար և պատրաստվում է շարունակել այդ գործունեությունը հատուկ դպրոցներում 2009 թվականին ևս:

Գործընկերության ՀԿ-ների կողմից իրականացվել է նաև մարդու իրավունքների ոլորտում ակտիվ նոր կազմակերպությունների և խմբերի հնարավորությունների ամրապնդման գործունեություն հատկապես մարզերում: Որպես օրինակ՝ Հելսինկյան կոմիտեն մոբիլիզացրել և կրթել է մարզային երիտասարդությանը՝ ուսումնասիրելու մարդու իրավունքների իրավիճակը դպրոցներում:

Վեց այլ հասարակական կազմակերպություններ, որոնք նույնպես Գործընկերության անդամ են, զարգացրել են իրենց քարոզչական ջանքերը այս հաշվետու ժամանակաշրջանում և իրականացրել բազմաթիվ քարոզչական նախաձեռնություններ և հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված ծրագրեր: Սա հնարավոր է դարձել Նիդեռլանդների կառավարության և Հիմնադրամի աջակցության շնորհիվ (հավելյալ տեղեկությունների համար՝ տե՛ս Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի 2008թ. զեկույցը):

## Հայտարարություններ

### ԳՀԲՀ հայտարարությունը Հավաքների ազատության հիմնարար իրավունքի մասին

Մենք՝ ներքոստորագրյալներս, խիստ մտահոգված ենք այն փաստով, որ ժողովրդավարական գործընթացները վերականգնելու նվազագույն պահանջները, որոնք շարադրված են ԵԽԽՎ թիվ 1609 և 1620 բանաձևերում և որոնք հրատապ են ճանաչվել ՀՀ կառավարության կողմից, չեն իրականացվել, փոխարենը՝ իշխանությունների կողմից նոր սահմանափակումներ են կիրառվում: Մենք, մասնավորապես, մտահոգված ենք հավաքների ազատության հիմնարար իրավունքով, որն ամրագրված է Մարդու իրավունքների հռչակագրով և ՀՀ սահմանադրությամբ:

Արտակարգ դրությանը հաջորդած ամիսների ընթացքում ՀՀ քաղաքացիական հասարակությանը շարունակաբար թույլ չեն տվել մի շարք կարևոր (սկսած մարդու իրավունքների հետ կապված իրավիճակից և ավարտած կրոնի ազատության) թեմաներով միտինգներ, քննարկումներ, տեսաֆիլմերի ցուցադրումներ և կլոր սեղաններ անցկացնել: Հյուրանոցների, կինոթատրոնների և բիզնես կենտրոնների համար սովորական է դարձել ՀՀ կառավարության և առկա իրավիճակի հանդեպ քննադական մոտեցում ունեցող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին տարածքի վարձակալման հարցում մերժելը: «Արմենիա-Մարիոթ», «Կոնգրես», «Անի պլազա» և այլ հյուրանոցներ, ինչպես նաև «Մոսկվա» կինոթատրոնը շարունակաբար մերժել են դահլիճի վարձակալությունը քաղաքացիական հասարակության կողմից անցկացվող միջոցառումների համար՝ դրանք պիտակավորելով որպես «քաղաքական»:

Որոշ հյուրանոցներ բացեիքաց ասել են, որ հրահանգ ունեն դահլիճները վարձով չտալ այնպիսի միջոցառումների համար, որոնք կարող են քաղաքական համարվել և ստիպված են զանգահարել «համապատասխան մարդկանց»՝ միջոցառումների «քաղաքական» լինելու բնույթը ստուգելու համար: Որոշները բանավոր ասել են, որ իրենց չի թույլատրվում դահլիճները վարձով տալ այդ կարգի նպատակների համար, սակայն իրենց գրավոր պատասխաններում նշել են այլ կարգի տարբեր արդարացումներ, ինչպես օրինակ՝ տեխնիկական խնդիրները կամ դահլիճների զբաղված լինելը:

Դահլիճները վարձով չտալու համար գործարարների վրա գործադրված ճնշումը դուրս է իրավական որևէ համատեքստից. մասնավոր ընկերությունների կողմից դահլիճները վարձով տալու գործընթացները կարգավորող որևէ օրենք գոյություն չունի: Նման հակաժողովրդավարական դրսևորումները նոր և լուրջ հարված են հասցնում ժողովրդավարությանը և շուկայական տնտեսությանը:

Ստորև բերված են իրավական կազմակերպությունների և գործողությունների միայն որոշ օրինակներ, որոնց համար մերժվել է վարձակալության պայմանագրի տրամադրումը՝ - սեպտեմբեր ամսին «Կոնգրես» հյուրանոցը մերժել է «Ընդդեմ իրավական կամայականության» հիմնադրամի կողմից կազմակերպված միջոցառումը՝ Սայաթ-Նովայի անվան դպրոցի ուսուցիչների աշխատանքից ազատման հարցի վերաբերյալ

(աշխատանքային իրավունքների պաշտպանության գործ): Բանավոր բացատրության մեջ ասվում էր, որ այն քաղաքական բնույթի է:

- «Կոնգրես» հյուրանոցը սկզբում հաստատել, իսկ հետո մերժել է հյուրընկալել հոկտեմբերի 9-ի հանրապետությունում տեղի ունեցող գործընթացներին (հեռարձակման մասին օրենքի վերջին փոփոխությունները, լրատվամիջոցների ազատության/լրատվության մատչելիության խախտումները, հավաքների և միավորման ազատությունը, համատարած կոռուպցիան և իշխանության չարաշահումը, ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարի հաշվետվությունը և ԵԽԽԿ 1609 և 1620 բանաձևերի իրականացումը հանրապետությունում) առնչվող հիմնական մտահոգությունները քննարկելու Գործընկերության միջոցառումը: Բանավոր բացատրվել է, որ իրենք չեն կարող հյուրընկալել «քաղաքական» միջոցառումներ, և որ Բաց հասարակության ինստիտուտը մերժում կստանա նաև մնացած բոլոր հյուրանոցներից: Ջուզահեռաբար, նույն խնդրանքը ներկայացվել էր նաև «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցին: Վերջինս ստիպված է եղել «որոշում կայացնողներից» ճշտել, թե նրանք կարո՞ղ են թույլ տալ միջոցառման հյուրընկալումը:

- «Մոսկվա» կինոթատրոնը սկզբում համաձայնել, սակայն հետո հրաժարվել է ցուցադրել «Պետական կարիքների գոհեր» ՀԿ-ի պատվերով Տիգրան Պասկևիչյանի նկարահանած «Օտարում» ֆիլմը նույնիսկ նախնական պայմանավորվածության համաձայն գումարներն արդեն փոխանցված լինելու պարագայում: Բանավոր պաշտոնական պատասխանը եղել է այն, որ իրենք չեն կարող թույլ տալ «քաղաքական բնույթի» ֆիլմերի ցուցադրում: «Քաղաքական» համարելու պատճառն այն է եղել, որ դրվագներից մեկում երևում է Լևոն Տեր-Պետրոսյանը: Հետագայում ֆիլմի ցուցադրումը մերժվել է ինչպես «Մարիոթ», այնպես էլ «Կոնգրես» հյուրանոցների կողմից: Միջոցառման անցկացումը նախատեսված էր հոկտեմբերի 10-ին, սակայն, վերոհիշյալ պատճառներից ելնելով, կազմակերպիչները ստիպված էին ցուցադրումը տեղափոխել հոկտեմբերի 27-ին, Թեբեյան մշակույթի կենտրոնում:

- Հայաստանի հելսինկյան կոմիտեն ստիպված էր պայքարել, որպեսզի հյուրանոցում տարածք վարձակալեր՝ «Բոնությունը դպրոցներում» թեմայով նյութի ներկայացման համար:

- «Անի» և «Կոնգրես» հյուրանոցները մերժել են հյուրընկալել «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի կողմից կազմակերպված սեմինարը՝ կրոնական հանդուրժողականության թեմայով: «Էրեբունի» հյուրանոցը սկզբում համաձայնել է, հետո՝ հրաժարվել հյուրընկալել միջոցառումը: Ըստ պաշտոնական բացատրության ազատ դահլիճներ չկային, որը, ինչպես մենք պարզեցինք, ճիշտ չէր:

Մենք գտնում ենք, որ այս իրավիճակը խորապես անհանգստացնող և անընդունելի է մի երկրի համար, որն ընդգրկված է Եվրոպական նոր հարևանների քաղաքականության ծրագրում՝ մեկ անգամ ևս ընդգծելով ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների գերակայությունը երկրի համար: Մենք կոչ ենք անում ՀՀ կառավարությանը՝ դադարեցնել իշխանության չարաշահումը, ինչը հակասում է ժողովրդավարական բոլոր նորմերին և ազատ տնտեսական համակարգին: Մենք նաև կոչ ենք անում բոլոր գործարարներին տեղի չտալ իշխանությունների ճնշմանը, որի պատճառով ՀՀ քաղաքացիներ զրկվում են հավաքների ազատության և խոսքի ազատության իրենց հիմնարար իրավունքներից:

Պետք է այժմ վերջ տալ Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ նախատեսված իրավունքների այս չարաշահումներին՝ իրավունքներ, որոնք հայ ժողովուրդն ինքն է իրեն տվել:

Ստորագրված է՝

<<Ասպարեզ>> ժուռնալիստների ակումբ  
Բաց հասարակության ինստիտուտի օմանդակության հիմնադրամ – Հայաստան  
Երևանի մամուլի ակումբ  
Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն  
<<Ինտերնյուս>> Մամուլի աջակցության ՀԿ  
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե  
<<Կրթության ասպարեզ>> ՀԿ  
<<Համագործակցություն հանուն ժողովրդավարության>> ՀԿ  
Հայաստանի հելսինկյան կոմիտե  
Հայաստանի հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ  
Մամուլի բազմազանության ինստիտուտ  
<<Մենք պլյուս>> ՀԿ  
<<Քաղաքացիական հասարակության ինստիտուտ>> ՀԿ  
Պետական կարիքների գոհեր ՀԿ

## Հայտարարություն

### ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների Խորհրդի երրորդ գումարման ընտրություններում թեկնածություն չառաջադրելու եւ որեւէ թեկնածություն չպաշտպանելու մասին

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպությունների ներկայացուցիչներս ՀՄՀ-Հայաստան ծրագրի նախապատրաստական եւ իրականացման անցած փուլերում մեծ շահագրգռությամբ մասնակցել ենք ծրագրի հնարավոր թիրախների մշակմանը, Շահառուների խորհրդի (ՇԽ) կազմավորման կարգի մշակմանը, ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը, մոնիտորինգ եւ հանրային իրազեկում ենք իրականացրել՝ հնարավորինս ապահովելու ծրագրային գործընթացների թափանցիկությունը: Այդ ամենի հետ մեկտեղ, անցած 2 տարում ուշադրությամբ հետեւելով Հազարամյակի մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան ծրագրում քաղաքացիական հասարակության դերակատարությանը, որոշել ենք սեպտեմբերի վերջին կայանալիք ՇԽ-ի երրորդ գումարման ընտրությունների համար թեկնածուներ չհայտավորել եւ թեկնածություն չպաշտպանել՝ հետեւյալ պատճառներով.

ՀՄՀ-Հայաստան Ծրագրի հանրային հսկողության մարմինը՝ Շահառուների Խորհուրդը, որ կոչված է պաշտպանելու ծրագրի 750.000 ուղղակի շահառուների շահերը, իր կանոնակարգում համակարգային թերություն ունի, ինչը էականորեն նվազեցնում է ՇԽ-ի առաքելության իրականացման արդյունավետության աստիճանը. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ 15 անդամներից բաղկացած Շահառուների խորհուրդը ծրագրի գլխավոր մարմին՝ Կառավարման խորհուրդ (ԿԽ) է պատվիրակում 5 հոգու իր կազմից, որոնք շարունակում են միաժամանակ մնալ ՇԽ-ում՝ այդպիսով հանգեցնելով շահերի ակնհայտ բախման:

Անցած 2 տարվա ընթացքում ծրագրի ՇԽ-ի կազմից ԿԽ պատվիրակված մի քանի անդամներ մասնակցել են ծրագրային (կապալային) մրցույթների, ծրագրային միջոցներից պատվեր ակնկալելով, եւ բոլոր այդ մրցույթների անցկացման ժամանակամիջոցում մնացել են ՇԽ-ի ու ԿԽ-ի անդամներ: Բացի այդ, նրանք, մասնակցելով մրցույթներին, այդ մասին անհրաժեշտ չեն համարել տեղեկացրել Շահառուների խորհրդին: Շահերի այսօրինակ բախման քննադատություններին ի պատասխան, հայտատուները նշել են, թե իրենք ՇԽ-ից եւ ԿԽ-ից հրաժարական կտան միայն այն դեպքում, եթե մրցույթում շահեն:

2008 թվի հուլիսի 23-ի նիստում [1] ծրագրի Կառավարման խորհուրդը միաձայն որոշել է դուլարի արժեզրկման եւ շինաշխատանքների թանկացման պատճառաբանություններով կրճատել ծրագրի ջրաշինարարական արդյունքները: Ջրաշինարարական արդյունքների կրճատումները, զանազան մեթոդաբանական հաշվարկներով, կազմում են 50-70 տոկոս: [2] Այս որոշմանը ԿԽ-ի պետական պաշտոնյաների հետ միաձայն կողմ են քվեարկել նաեւ ՇԽ-ից ԿԽ պատվիրակված բոլոր 4 անդամները: Այս կրճատման որոշումից առաջ ՇԽ-ի կարծիքն ու դիրքորոշումը չեն կամեցել իմանալ ոչ միայն ԿԽ-ի անդամները, այլեւ

ծրագրի իրականացման ՊՈԱԿ-ը: Նման կրճատումն ուղղակիորեն եւ խստորեն վնասում է հարյուր հազարավոր գյուղացիների եւ ֆերմերների շահերին: Այնինչ, մի կողմից ծրագիրը պլանավորող եւ նախապատրաստող աշխատանքային խումբը պարտավոր էր ժամանակին պատշաճ կերպով կանխատեսել բոլոր հնարավոր ռիսկերը, իսկ, մյուս կողմից, կառավարությունը պարտավոր էր պահուստային կամ այլ միջոցներ ներդնել ծրագիրը չկրճատելու եւ գյուղացիներին հուսախաբ չանելու համար, մանավանդ, երբ ծրագրի համաֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների առկայության մասին ՀՀ իշխանությունները բազմիցս են վստահաբար արտահայտվել:

ՇԽ-ի անցած 2 ընտրությունների ժամանակ քաղաքացիական հասարակության անունից են ներկայացել, ընտրել եւ ընտրվել մի ամբողջ խումբ կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, որոնք միաժամանակ աշխատում են պետական հիմնարկներում, արդյունքում՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի խնդիրների լուծման գործում իրենց դիրքորոշումները հիմնականում համընկել են իշխանական պաշտոնյաների դիրքորոշումներին: [3] Դրանով շահագրգիռ հանրության մասնակցության գաղափարը նենգափոխվել է, եւ իրական շահառուների (ոչ թե մասնավոր շահ հետապնդողների) պաշտպանությունը խորհրդում դարձել է գրեթե անհնարին:

ՇԽ-ից համառորեն եւ հետեւողականությամբ գաղտնի են պահվում ծրագրի ընթացքին եւ, հավանաբար, կասեցման կամ դադարեցման ռիսկերին վերաբերվող ու ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված գաղտնիք չպարունակող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են ՀՀ նախկին նախագահ Ռ.Քոչարյանի եւ գործող նախագահ Ս.Սարգսյանի նամակները՝ ուղղված ՀՄԿ գլխավոր գործադիր տնօրեն Ջ.Դանիլովիչին:

Վերոհիշյալ եւ այլ խնդիրների լուծման ուղղությամբ «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության պաշտպանած ՇԽ երեք անդամների (Լեւոն Բարսեղյան, Արթուր Սաքունց եւ Սեյրան Մարտիրոսյան) ներդրած ջանքերը հիմնականում ապարդյուն են եղել: Խնդիրների հնարավոր լուծումների նախաձեռնությունները ՇԽ-ի մեծամասնության ջանքերով տապալվել են:

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան եւ կորպորացիայի հայաստանյան ներկայացուցիչները ամբողջությամբ տեղյակ են վերոհիշյալ խնդիրներին, բայց էական ջանքեր չեն ներդրել դրանց լուծման համար եւ շոշափելի ազդեցություն չեն ունեցել ՇԽ-ի աշխատանքի արդյունավետության բարձրացման վրա:

Այսպիսով, մենք գտնում ենք, որ ՇԽ-ն իր կանոնակարգային ձեւաչափով ըստ էության, եղել ու մնում է որպես միջպետական համաձայնագրով պահանջվող՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ձեւական մարմին եւ ոչ թե շահառուների շահերի պաշտպան ու ի գորու է կարգավորել մանր ընթացակարգային հարցեր միայն:

Առաջիկայում առավել խիստ հսկողության տակ ենք պահելու ՀՄՀ-Հայաստան ծրագրի ընթացքը, ՇԽ-ի եւ ԿԽ-ի աշխատանքները, եւ պարբերաբար հանրությանն ենք ներկայացնելու մեր դիտարկումները ծրագրի ընթացքի մասին:

12 սեպտեմբերի, 2008

1. Ժուռնալիստների <<Ասպարեզ>> ակումբ
2. Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
3. Երևանի մամուլի ակումբ
4. Հայաստանի Հելսինկյան կոմիտե
5. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
6. Համայնքների ֆինանսիստների միություն
7. <<Թրանսփարենսի Ինթերնեշնլ>> հակակոռուպցիոն կենտրոն
8. Բաց հասարակության ինստիտուտի օմանդակության հիմնադրամ-Հայաստանյան մասնաճյուղ
9. <<Մենք պլյուս>> ՀԿ,
10. <<Կրթության ասպարեզ>> ՀԿ
11. Ազատանի <<Ազատա>> համայնքային կենտրոն
12. Լրագրողների <<Սելեն>> ակումբ, ՀԿ
13. <<Հոգևոր Հայաստան>>, ՀԿ
14. <<Համագործակցություն հանուն ժողովրդավարության>>, ՀԿ
15. Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն
16. <<Խնամք>> ՀԿ
17. Լոռե Էկո ակումբ
18. <<Ֆեմիդա>> ՀԿ,
19. <<Վստահություն>> սոցիալական աշխատանքի և հետազոտությունների կենտրոն
20. <<Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա>>, ՀԿ
21. <<Ընդդեմ իրավական կամայականության>> ՀԿ
22. <<Թիմ>> հետազոտությունների կենտրոն, ՀԿ
23. <<Ինտերնյուս-Հայաստան>> ՀԿ
24. Հոգեկան առողջության հիմնադրամ
25. Սոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոն
26. Ս. Սանդուխտ կույսի անվան տիկնանց միություն
27. <<Բժիշկների և ինժեներների միություն>> ՀԿ
28. Իրավունքների տեղեկատվական կենտրոն
29. <<Հույսի կամուրջ>> ՀԿ
30. <<Դափնեճյուղ>> ՀԿ
31. <<ՄԷԿ>> մշակութային եքսպերիմենտալ կենտրոն
32. <<Բիոսոֆիա>> ՀԿ
33. <<Երաշխիք>> ՔՀԿ ՀԿ
34. <<ԽորանԱրդ>> ինտելեկտուալ կենտրոն>> ՀԿ
35. <<Գեոֆոն>> ՀԿ
36. <<Շիրակ կենտրոն>> ՀԿ
37. Գյումրու Օրհուս-կենտրոն
38. Ժամանակի հայացքից, ՀԿ
39. Վանաձորի մամուլի ակումբ, ՀԿ
40. Ժողովրդավարական նախաձեռնությունների երիտասարդական կենտրոն



[1] Պաշտոնական արձանագրություն

<http://www.mca.am/new/armversion/pdf/GC%20minutes-32-arm.pdf>

[2] Կարեն Նազարյան (Հայկական միջեկեղեցական խորհուրդ ՀԿ գործադիր տնօրեն), Կարինե Բաղդասարյան (լիազորված անձ), Արայիկ Հովհաննիսյան (Հայաստանի թաղապետարանների խորհուրդների ասոցիացիայի նախագահ), Վանիկ Սողոմոնյան (Ֆերմերների ազգային ասոցիացիայի նախագահ), Աշոտ Ոսկանյան (<<Ագրոգարգացում>> կազմակերպության նախագահ, <<Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն):

[3] 2007թ. ընտրությունների ժամանակ եղավ մի դեպք, երբ մի քաղ. ծառայող՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գլխավոր մասնագետը, չի նշել իր պետ. ծառայողի պաշտոնը և ընտրվել է որպես Շահառուների խորհրդի անդամ և մասնակցել է Կառավարման խորհրդի հինգ պատվիրակների ընտրության գաղտնի քվեարկությանը:

## Հայտարարություն 2008թ. ՀՀ Նախագահական ընտրությունների վերաբերյալ

Մենք՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ ներքոստորագրյալ կազմակերպություններս, մեր խորին մտահոգությունն ենք հայտնում 2008 թ. փետրվարի 19-ի ՀՀ նախագահական ընտրությունների, նախընտրական շրջանի, ընտրարշավի և հետընտրական գործընթացների վերաբերյալ: Միջազգային դիտորդների գնահատականը, որը կառավարության և վերջինիս կողմից վերահսկվող լրատվամիջոցների կողմից փորձ է արվում ներկայացնել դրական լույսի ներքո, քննադատական էր: Սակայն զեկույցի առաջին երկու նախադասությունների և գնահատականի փաստերի միջև առկա այս ակնհայտ հակասության արդյունքը դարձավ այն, որ կառավարությունը մեջբերում է միջազգային դիտորդների գնահատականի միայն առաջին պարբերությունը՝ լեզվատիմիզացնելու ընտրության արդյունքները: Մինչդեռ միջազգային դիտորդները զեկույցում մատնանշել են լրատվության գրաքննության, ընտրողներին վախեցնելու, քվեներ գնելու, ինչպես նաև այլ փաստեր և իրենց այցելած 16 տոկոս ընտրատեղամասերի քվեների հաշվարկը անվանել են "վատ" կամ "շատ վատ": Նման պրակտիկան որպես "մի քայլ առաջ" և ազատ ու արդար "ընտրություններ անցկացնելու պարտավորություններին համահունչ" որակելը հարցականի տակ է դնում ժողովրդավարության, ժողովրդավարական չափանիշների և սկզբունքների գաղափարը և ավելի է նվազեցնում ժողովրդավարական բարեփոխումների չափանիշները:

Ներքոստորագրյալ կազմակերպություններից մի քանիսը որպես դիտորդ են հանդես եկել ընտրության օրը և հետոնել են ընտրական գործընթացներին մինչ փետրվարի 19-ը, ինչպես նաև դրանից հետո ընկած ժամանակահատվածում: Այդ կազմակերպությունների զեկույցներում փաստագրված են բռնությունների բազմաթիվ դեպքեր և խախտումներ: Մեզ համար առանձնահատուկ մտահոգություն են առաջացնում Լրատվամիջոցների ազատության/ լրատվության մատչելիության, բռնությունների, կոռուպցիայի և վարչական ռեսուրսների օգտագործման և հասարակական գործիչների ձերբակալության երևույթները:

Կարևոր կետերից մեկը, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությունը մատնանշել է իր միջանկյալ զեկույցում, վերաբերում է ընտրական գործընթացի հանդեպ հասարակական վստահություն ձևավորելուն: Խորը անվստահությունը և հաճախ արժարժվող հասարակական ապատիան ոչ այլ ինչ է, քան Հայաստանի ժողովրդի ինքնապահպանման հակազդեցությունն ընդդեմ անպատժելիության մթնոլորտի նրանց շուրջ, որոնք ընտրակեղծիքներ են իրականացրել նախկին բոլոր ընտրությունների ժամանակ: Ընտրություններից հետո տեղի ունեցող գործընթացները տազնապալի են և անկասկած կխորացնեն հասարակության անվստահությունը:

Մենք հավատացած ենք, որ քանի դեռ ընտրական կեղծիքները չեն հետաքննվում և պատժվում, վստահություն չի լինի ընտրական գործընթացի, ինչպես նաև դատախիբավական համակարգի նկատմամբ:

Մենք կարծում ենք, որ վերոհիշյալ խնդիրների շուրջ միայն բաց և լայն զանգվածներին ներառող հասարակական քննարկումների միջոցով է հնարավոր վերականգնել հասարակական վստահության մթնոլորտը:

Ելնելով վերը նշվածից՝ մենք գտնում ենք, որ այս ընտրությունները չեն իրականացվել ժողովրդավարական արժեքների և գործընթացների վերաբերյալ մեր ունեցած պատկերացումներին համահունչ:

Մենք համոզված ենք, որ այն մոտեցումը, որն իշխանությունները կկիրառեն ընտրախախտումները հետաքննելիս ցույց կտա վերջիններիս վճռականությունը՝ գործել ժողովրդավարական ազատ և արդար ընտրություններ անցկացնելու կանոնների համաձայն:

Մենք կոչ ենք անում Հայաստանի կառավարությանը դադարեցնել քաղաքական դրդապատճառներ ունեցող ձեռքարկությունները: Մրանք անպատժելիության կոչեր չեն, այլ կոչ կառավարությանը՝ օրինակ ծառայել Հայաստանի ժողովրդի համար և գործել օրենքի շրջանակներում:

Մենք կոչ ենք անում միջազգային հանրությանը տեր կանգնել Հայաստանի կառավարության՝ ընթացակարգերին հետևելու պարտականության կատարմանը և պահանջել հետաքննության հստակ փաստաթղթագրում և պատշաճ պատիժ օրենքը խախտողների նկատմամբ:

Մենք կոչ ենք անում միջազգային հանրությանը կատարել օբյեկտիվ եզրակացություններ՝ հիմնված սեփական փաստերի դիտարկումների վրա և չվարկաբեկել ժողովրդավարության գաղափարը, ժողովրդավարական չափանիշներն ու սկզբունքները, ինչպես նաև չպատվազրկել դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպություններին:

Ասպարեզ ժուռնալիստների ակումբ  
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե  
Հայաստանի հելսինկյան կոմիտե  
Հայաստանի հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ  
Ինտերնյուս Մամուլի աջակցության ՀԿ  
Մամուլի բազմազանության ինստիտուտ  
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ – Հայաստան  
Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն  
Երևանի մամուլի ակումբ  
Ընդդեմ իրավական կամայականության ՀԿ

## ԳՀԲՀ Հայտարարությունը

### Խորհրդարանական ընտրությունների, նախընտրական շրջանի և ընտրաբշավի մասին

14 մայիս, 2007թ.

Մենք՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ ներքոստորագրյալ կազմակերպություններս, մեր խոր մտահոգությունն ենք հայտնում նախընտրական և ընտրական շրջանի կապակցությամբ: Այս ընտրությունները, և ազատ ու արդար ընտրություններ անցկացնելու անհրաժեշտությունը, հատկապես կարևորվում էին հասարակության կողմից փոփոխությունների ակնկալիքի համատեքստում: Կառավարությունը իր հերթին լիովին գիտակցում էր, որ երկրի միջազգային վարկանիշը և հնարավորությունները մասնակցել Եվրոպական հարևանության քաղաքականության և Հազարամյակների մարտահրավերների ծրագրերին մեծապես վտանգված կլինեն՝ ևս մեկ՝ միջազգային չափանիշներին անհամապատասխան ընտրությունների պարագայում: Այնուամենայնիվ, դա չկանգրեցրեց իշխանություններին՝ նախընտրական տարվա ընթացքում ուժեղացնելու գերատեսչությունների և վարչական ռեսուրսների ու դրանց անօրինական օգտագործման հանդեպ գոյություն ունեցող վերահսկողությունը:

Մենք մեր խոր մտահոգությունն ենք հայտնում լրատվամիջոցների ազատության և լրատվամիջոցներից օգտվելու իրավունքի, հավաքների ազատության, մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի խախտումների, ընտրաշրջանից առաջ և դրա ընթացքում գործադրված բռնությունների և սպանությունների կամ մահափորձերի, ինչպես նաև լայնատարած կոռուպցիայի և վարչական ռեսուրսի օգտագործման կապակցությամբ: Ընտրապայքարում օգտագործվել են այնպիսի մեթոդներ և գործելակերպ, որոնք ձևավորում են վախի, կասկածի և անձի վտանգվածության մթնոլորտ: Այս մտահոգությունը հիմնված է մեր դիտարկումների և մեկ տարվա ընթացքում մեր կողմից իրականացրած մոնիտորինգային աշխատանքների վրա:

• Լրատվամիջոցների ազատություն/լրատվամիջոցներից օգտվելու իրավունք. չնայած որ ընդդիմությունը ստացել է ընտրաբշավի և դրան նախորդող մի քանի օրվա ընթացքում լրատվամիջոցներից օգտվելու հնարավորություն, հայտնի փաստ է, որ դրանից առաջ նրանք գրեթե զրկված էին եթերից: Իշխանությունների կողմից վերահսկվող Հանրային հեռուստատեսությունը և լրատվական այլ ալիքներ համեմատաբար հավասարակշիռ կերպով լուսաբանել են ընտրաբշավը, այնուհանդերձ, ընտրաբշավի մեկնարկից առաջ ընկած ժամանակահատվածում լրատվամիջոցների կողմնապահ մոտեցմամբ, արդեն իսկ, մեծ վնաս էր պատճառված: Մեզ՝ որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, մտահոգում են նաև հետևյալ կարևոր հիմնախնդիրները.

ա. Չնայած որ 2005 թ. սահմանադրական փոփոխություններն ընձեռել են ավելի ներկայացուցչական և, ուստի, ավելի անկախ կարգավորող մարմին ունենալու հնարավորություն, 2007թ. փետրվարին ընդունված օրենսդրական “բարեփոխումների” հետևանքով, երաշխավորվել է կարգավորող մարմնի՝ մինչև 2011 թ. նախագահի

հսկողության ներքո մնալը (նշենք, որ մինչ այդ արդեն կսպառվեն հեռուստալիցենզիաների ժամկետները և կտրամադրվեն նորերը):

բ. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահը, ում անվան հետ է կապվում ընդդիմադիր միակ հեռուստաալիքի փակումը և 12 տենդերային մրցույթներում Ա1+-ին լիցենզիայի տրամադրման շարունակական մերժումը, կրկին նշանակվել է նույն պաշտոնին, ինչը վկայում է այն մասին, որ նրա կողմից տվյալ մարմինը ղեկավարելու ընթացքում իրականացված և իրականացվելիք քաղաքականությանը “կանաչ լույս” է տրվում:

գ. Տարին “նշանավորվել” է լրագրողների դեմ բռնության դեպքերով: Օրինակ, Նարինե Ավետիսյանի (“Լոռի” հեռուստակայանի գործադիր տնօրեն) ահաբեկումը, Գագիկ Շամշյանի (արտահաստիքային լրագրող) ահաբեկումը, որին հաջորդել է նրա քրեական հետապնդումը, հարձակումը Հովհաննես Գալաջյանի (“Իրավունք” թերթի գլխավոր խմբագիր) վրա և Արման Բաբաջանյանին (“Ժամանակ Երևան” թերթի գլխավոր խմբագիր) անհիմն խիստ ազատագրկման դատապարտումը:

- Հավաքների ազատություն. ընտրարշավի վրա իրենց բիծն են թողել ընդդիմադիր կուսակցությունների և քաղաքացիական հասարակության, օրինակ, <<Ժառանգություն>>, <<Օրինաց երկիր>> կուսակցությունների, <<Իմպիչմենթ>> դաշինքի և այլոց կողմից կազմակերպված հրապարակային ժողովների արգելման բազմաթիվ դեպքերը Երևանում և հատկապես շրջաններում:

- Անդամակցության ազատություն. կիրառվել է կուսակցություններին կամավոր անդամակցելու իրավունքի ոտնահարում, որը հատկապես լայն տարածում է ունեցել նախընտրական շրջանում, մասնավորապես, պետական հաստատություններում և փոքր համայնքներում:

- Բռնություն. ընտրությունների մասնակցող խոշորագույն քաղաքական կուսակցությունների հետ կապեր ունեցող պաշտոնյաների սպանություններ կամ մահափորձեր, ինչպես նաև համայնքային <<հեղինակությունների>> սպանություններ են տեղի ունեցել Հայաստանի տարբեր շրջաններում: Ոստիկանությունը ծեծի է ենթարկել մայիսի 9-ի ընդդիմության երթի մասնակիցներին՝ փորձելով վախ և քառու սերմանել ցուցարարների շրջանում, չնայած այդ փորձը մեծ մասամբ տապալվել է: Տարբեր պատրվակներով Ազգային անվտանգության ծառայությունը խուզարկություններ է իրականացրել ընդդիմության ակտիվիստների բնակարաններում և գրասենյակներում, և կալանավորել ընդդիմության առաջնորդներին:

- Մասնավոր կյանքի գաղտնիության իրավունք. կիրառվել է ՊԱԿ-ի գործիքակազմից ժառանգված մեթոդ, այն է՝ մասնավոր զրույցի գաղտնալուծում, սակայն այդ արարքը չի դատապարտվել իշխանությունների կողմից և դրան չի հետևել քրեական գործի հարուցում: Ավելին, Հանրապետության Նախագահը համալսարանի ուսանողների հետ հանդիպման ընթացքում դատողություններ է արել ձայնագրության վերաբերյալ՝ այդ կերպ տեղիք տալով ընդդիմադիր առաջնորդի կերպարի վերաբերյալ բացասական կարծիքի ձևավորմանը:

• Կոռուպցիա. Հայաստանում ինստիտուցիոնալիզացվել է ընտրողներին կաշառելու պրակտիկան ընտրարշավից առաջ, ընտրարշավի ժամանակ, ինչպես նաև բուն ընտրության օրը, և այս ընտրությունները բացառություն չդարձան: Կաշառումը տեղի է ունեցել “բարեգործության” քողի ներքո, այսինքն, որոշակի քաղաքական կուսակցությունների պատկանող, այսպես կոչված, <<բարեգործական>> կազմակերպությունների միջոցով բաժանվել են գյուղատնտեսական ապրանքներ, պարարտանյութ, հեռուստացույցեր, ինչպես նաև ուղղակի կաշառքի տեսքով: Կաշառք է առաջարկվել/տրվել նաև հանձնաժողովների անդամներին:

• Վարչական ռեսուրսի օգտագործում. պետական գերատեսչությունների և վարչական ռեսուրսների հանդեպ վերահսկման իրականացումը անհավասար պայմաններ է ստեղծել քաղաքական կուսակցությունների համար: Ազատ և արդար ընտրություններ ապահովելու կոչված կառույցները չկատարեցին իրենց պարտավորությունները: Պետական պաշտոնյաները, ընտրարշավից առաջ և դրա ընթացքում, իրենց աշխատանքային ժամերին ակտիվորեն զբաղվել են քարոզչությամբ: Իշխանությունների կողմից ճնշում է գործադրվել պետական, ինչպես նաև մասնավոր հաստատությունների աշխատակիցների վրա՝ կատարելու որոշակի քաղաքական ընտրություն՝ այդպիսով ստեղծելով վախի և ահաբեկության մթնոլորտ: Նրանց վրա ճնշում է գործադրվել նաև որոշ կուսակցությունների համար՝ քվեների որոշակի քանակի ապահովման նպատակով: Ընդդիմադիր կուսակցությունների հավաքները հաճախող շարքային քաղաքացիները ահաբեկվել են տեղական իշխանությունների կողմից և դրա փոխարեն ստիպված են եղել մասնակցել իշխանամետ կուսակցությունների հավաքներին: Չնայած ընտրացուցակների բարելավման վերաբերյալ հայտարարությանը՝ բազմակի քվեարկության, ինչպես նաև երկրից բացակայող ազգաբնակչության ձայների օգտագործման շատ դեպքեր են արձանագրվել:

Վերոհիշյալ փաստերից ելնելով՝ մենք հայտարարում ենք, որ այս ընտրությունները չեն համապատասխանում ժողովրդավարության արժեքների մեր ընկալմանը: Այս ամենը լուրջ մտահոգություն է առաջացնում Հայաստանի Հանրապետության ընտրած ուղու վերաբերյալ:

<<Ասպարեզ>> ժուռնալիստների ակումբ  
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ – Հայաստան  
Երևանի մամուլի ակումբ  
<<Թիմ>> հետազոտությունների կենտրոն  
Ժողովրդավարություն. քաղաքական և իրավական հետազոտությունների կենտրոն  
Իրավունքի և տեղեկատվության կենտրոն  
<<Ինտերնյուս>> Մամուլի աջակցության ՀԿ  
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե  
Համագործակցություն հանուն ժողովրդավարության  
Հայաստանի հելսինկյան կոմիտե

Հայաստանի հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ  
Հոգևոր Հայաստան

Մամուլի բազմազանության ինստիտուտ

Մոցիլայական քաղաքականության և զարգացման կենտրոն

Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսփարենսի ինթերնեշնլ - Հայաստան

Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն

Քաղաքական և միջազգային հետազոտությունների միջազգային կենտրոն

Քաղաքացիական հետազոտությունների ազատ ամբիոն

**ԳՀԲՀ հայտարարությունը ԵԱՀԿ-ի կողմից ընտրությունների դիտարկման կարգի մեջ փոփոխություններ մտցնելու՝ ԱՊՀ երկրների պահանջի վերաբերյալ**

<<Գործընկերություն հանուն բաց հասարակության>> նախաձեռնության շրջանակներում միավորված քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ սույնով հայտնում են իրենց կարծիքը այն մասին, որ վերջերս Հայաստանը՝ ԱՊՀ մի շարք այլ երկրների հետ միասին, պահանջել է փոփոխություններ մտցնել ԵԱՀԿ-ի կողմից ընտրությունների դիտարկման կարգի մեջ:

Մենք դա դիտարկում ենք որպես ևս մի նահանջ ժողովրդավարությունից և երկրի հետագա մեկուսացում Եվրոպական ինտեգրացիայից: Մենք կարծում ենք, որ դա վնասակար զարգացում է հնարավոր բոլոր տեսակետներից՝ քաղաքական, աշխարհաքաղաքական, ռազմավարական և հասարակական: Դեռևս պարզ չէ, թե այդ ապակառուցողական փորձը որքան վնաս է հասցնելու ԵԱՀԿ-ին, որը միջազգային ամենավստահելի կազմակերպություններից է: Սակայն դա, անկասկած, ավելի մեծ վնաս է հասցնելու և արդեն հասցրել է Հայաստանին: Հայաստանի իշխանությունների այդ քայլն էլ ավելի է հեռացնում մեր երկիրը զարգացած ժողովրդավարություն ունեցող երկրներից, երբ առաջինները հանդես են գալիս ի օգուտ փակ ընտրական գործընթացների, որոնք հաշվետու չեն երկրի ժողովրդի առջև, այն էլ մի երկրի, որը դեռ ոչ մի իրապես ազատ և արդար ժողովրդավարական ընտրություններ չի անցկացրել: Դա ցույց է տալիս, թե որքան քիչ են Հայաստանի իշխանությունները մտածում միջազգային չափանիշները պահպանելու մասին: Ավելին, դա բացասաբար է անդրադառնում հայաստանյան հանրության կողմից իշխանությունների հանդեպ արդեն իսկ ցածր մակարդակի վրա գտնվող վստահության վրա առ այն, որ վերջիններս պարտաստակամություն ունեն իրապես ժողովրդավարական ընտրություններ անցկացնել:

Մենք չենք տեսնում որևէ պատճառ, որը ժողովրդավարական և բաց կառավարությանը, որն, ի դեպ, հայտարարում է, որ ցանկություն ունի երկիրը մոտեցնել ժողովրդավարական չափանիշներին և Եվրոպական համայնքին, կստիպեր պաշտպանել այն պահանջները, որոնք ոչ միայն կսահմանափակեն ընտրությունների դիտորդների թիվը, այլ նաև կազդեն գործընթացի անկախության վրա: 2007 թ.-ի մայիսի 13-ից ի վեր Հայաստանի իշխանությունները բազմիցս անդրադարձել են խորհրդարանական ընտրություններին տրված դրական գնահատականին: Նրանք պնդում են, որ միջազգայնորեն ընդունվել է, որ տեղի է ունեցել ժողովրդավարական զգալի առաջընթաց: Նրանք այդ գնահատականն օգտագործել են <<Հազարամյակի մարտահրավերների>> ծրագրի պահանջներին բավարարելը և Եվրոպական հարևանության ծրագիրն ընդունելը արդարացնելու համար: Կարելի էր մտածել, որ, հաջողությամբ, հանձնելով քննությունը, Հայաստանի կառավարությունը կողջուներ բացության գոնե միևնույն մակարդակը պահպանելու հնարավորությունը: Ինչ կատարվեց վերջին մի քանի ամիսների ընթացքում, որը ստիպեց իշխանություններին հետ կանգնել ընտրությունների գնահատման այն գործընթացից, որն այդքան շատ օգտագործվել է ի օգուտ նրանց:



Ենթադրվող պատասխանները շատ են, և դրանք, ցավոք, հարիր չեն Հայաստանի իշխանություններին: Առաջիկա նախագահական ընտրություններն այդ ենթադրություններն էլ ավելի ոչ գովելի են դարձնում: Ցավոք, Հայաստանի իշխանությունները չեն տեսնում միջազգային ասպարեզում ձեռնարկվող իր քայլերը պարզաբանելու կարիքը: Իշխանությունները որևէ բացատրություն չեն տալիս նաև ոչ պարզ և վիճելի քայլերի համար: Հայաստանում հանրային քաղաքականության բաց գործընթացների պայմաններում (գործընթացներ, որոնք այնպես էլ մութ կմնան մինչև պետական պաշտոնյաները չընտրվեն մրցակցային, ազատ և արդար ընտրական գործընթացների միջոցով), Հայաստանի ժողովրդին մնում է՝ Հայաստանի իշխանությունների դրդապատճառները հասկանալու փորձեր կատարելիս, ապավինել հին խորհրդային գուշակելու խաղին:

Չնայած, որ դրդապատճառները պարզ են, այնուամենայնիվ, ժողովրդավարությանը և Հայաստանի բացությանը հասցրած վնասը բավականին պարզ է: Մենք՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներս, բողոքում ենք նրա դեմ, որ Հայաստանի իշխանությունները կուրորեն հետևում են ժողովրդին վնաս հասցնող նախաձեռնություններին:

#### **ՀԳ**

Երբ սույն հայտարարության տեքստն արդեն պատրաստ էր, արտգործնախարար Օսկանյանը բացատրեց այդ նախաձեռնությանը միանալու ՀՀ կառավարության պատճառը: Ըստ պարոն Օսկանյանի, դա արվել է երկարաժամկետ դիտորդների թիվը սահմանափակելու ճանապարհով միջոցներ խնայելու նպատակով: Պարզ չէ սակայն, թե տվյալ նախաձեռնության այլ, ոչ պակաս կարևոր դրույթները (օրինակ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ –ի դիտորդների զեկույցը նախապես կառավարության հաստատմանը ներկայացնելու առաջարկը) ինչպես են նպաստելու միջոցներ խնայելուն: Կարելի է միայն ենթադրել...

## **Բաց նամակ Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության և պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման վերաբերյալ**

19 նոյեմբերի, 2007թ.

ՀՀ նախագահ պրն. Ռոբերտ Քոչարյանին

ՀՀ վարչապետ պրն. Սերժ Սարգսյանին

ՀՀ ազգային ժողովի նախագահ պրն. Տիգրան Թորոսյանին

ՀՀ բնապահպանության նախարար պրն. Արամ Հարությունյանին

ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարար պրն. Ներսես Երիցյանին

Հայաստանի պղնձի ծրագիր (ACP) ՓԲԸ նախագահ պրն. Վալերի Մեժլումյանին

BTB (Հայաստան) ՓԲԸ տնօրեն պրն. Վալերի Օվսյաննիկովին

Հազարամյակի մարտահրավերներ Հայաստան ծրագրի շահառուների խորհրդին

### **ԲԱՑ ՆԱՄԱԿ**

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի հարցերով զբաղվող 34 հասարակական կազմակերպությունների կողմից հանուն Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնության 63 կազմակերպություններ իրենց մտահոգությունն են հայտնում երկրի բնական ռեսուրսների շահագործման ներկայիս գործընթացների՝ մասնավորապես Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության եւ պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման առիթով:

Կայուն զարգացում հասկացությունն ակնկալում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում եւ պահպանություն՝ հանուն ապագա սերունդների բարօրության: Մինչդեռ, երկրի կայուն զարգացման եւ ընդերքի շահագործման նկատմամբ խնայողաբար օգտագործման ռազմավարության բացակայությունն այսօր հանգեցնում է Հայաստանի հանքավայրերի անխնա եւ անհեռատես օգտագործման, ինչը կարող է անդառնալի բացասական ազդեցություն թողնել ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ՝ մարդկանց առողջության եւ երկրի տնտեսության զարգացման վրա:

Ներկայումս Թեղուտի հանքավայրի շահագործման վերաբերյալ Հայաստանի հասարակայնության եւ մասնագետների շրջանում առկա են հանքավայրի շահագործումը նախաձեռնող ընկերության մոտեցումներից լրջորեն տարբերվող կարծիքներ եւ մեկնաբանություններ: Գնահատելով, ինչպես տվյալ տարածքի բնակիչների համար որոշակի ժամանակավոր աշխատատեղերի բացման հնարավորությունները, այնպես էլ բնությանը հասցվող անդարձելի հնարավոր վնասներն ու կորուստները՝ գտնում ենք, որ անընդունելի է հասարակական անհամաձայնության պայմաններում շտապողական որոշում կայացնել հանքավայրի շահագործման վերաբերյալ՝ հաշվի չառնելով բազմաթիվ մասնագետների ու կազմակերպությունների կողմից հնչեցված մտահոգությունները:

Մինչդեռ, մենք կարծում ենք, որ դրանք առավել ուշադրության պետք է արժանանային երկրի տարածքում անտառների խիստ սակավության, ինտենսիվ անապատացման գործընթացների, ՀՀ բնապահպանական օրենսդրության, ինչպես նաև՝ Հայաստանի կողմից ընդունված միջազգային կոնվենցիաների պարտավորությունների խախտման պայմաններում:

Այդ կապակցությամբ կոչ ենք անում Հայաստանի Հանրապետության կառավարությանը.

- շտապ միջոցներ ձեռնարկել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում արդեն իսկ սկսված աշխատանքները կասեցնելու ուղղությամբ,
- իրականացնել անկախ փորձաքննություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ոլորտում մասնագիտացված միջազգային առաջավոր եւ ճանաչված կազմակերպությունների մասնագետների մասնակցությամբ՝ Թեղուտի հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման առավել անաչառ եզրակացություն ստանալու նպատակով:

Ակնկալում ենք հիմնախնդրի կարեւորության Ձեր ըմբռնումը եւ աջակցությունն այն լուծելու գործում: Ուշադիր ենք այս նամակի բոլոր հնարավոր արձագանքներին եւ պատրաստ ենք քննարկել մեր արտահայտած մտահոգությունները ցանկացած ձեւաչափով:

## 2007-2008թ.թ. միջոցառումների ցանկ

1. 2007թ. փետրվարի 21 – Քննարկում Հայաստանում իրավիճակի վերաբերյալ քաղաքացիական հասարակության գնահատականի շուրջ
2. 2007թ. մարտի 2 – Քննարկում քրեական գործը հավելյալ հետաքննության ուղարկելու վերաբերյալ
3. 2007թ. մարտի 16 – Քննարկում «Հայ Առաքելական եկեղեցու և Հայաստանի Հանրապետության հարաբերությունների» օրենքի շուրջ
4. 2007թ. ապրիլի 18 – Կրթությունը որպես քաղաքական մասնակցության և պարտավորությունների հիմք
5. 2007թ. մայիսի 3 – Քաղ. կուսակցությունների տեսակետներն ու մոտեցումները
6. 2007թ. մայիսի 14 – Հայտարարություն ընտրությունների վերաբերյալ
7. 2007թ. հունիսի 11 – Քննարկում Երևանում ճանապարհա-տրանսպորտային հարցերի և դրանց հնարավոր լուծումների շուրջ
8. 2007թ. հունիսի 20 – Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների 2006թ մոնիտորինգի հաշվետվության ներկայացում
9. 2007թ. հունիսի 29 – Մամուլի ասուլիս ՀՀ «Հեռուստատեսության և ռադիոյի» և «Պետ. տուրքերի մասին» օրենքների փոփոխությունների վերաբերյալ
10. 2007թ. հուլիսի 25 – Քննարկում Հայաստանում ԵՀՔ ծրագրի ներկա իրավիճակի մասին
11. 2007թ. սեպտեմբերի 12 - ԳՀԲՀ անդամների ժողով
12. 2007թ. նոյեմբերի 8 – Քաղաքացիական հասարակության գնահատականի ներկայացումը 2007թ. ԵՀՔ Գործողությունների պլանի իրականացման միջոցների վերաբերյալ
13. 2007թ. նոյեմբերի 9 – Հայաստանում ընտանեկան բռնությունների իրավիճակի ներկայացում
14. 2007թ. նոյեմբերի 19 – Հասարակական լսումներ Թեղուտի շուրջ

15. 2007թ. դեկտեմբերի 18 – ՀՀ-ում 2002-2007թ. Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների վերացման կոնվենցիայի իրականացման հաշվետվությունը - այլընտրանքային հաշվետվության ներկայացում
16. 2007թ. դեկտեմբերի 21 – Քննարկում օպերատիվ հետախուզական օրենքի շուրջ
17. 2008թ. փետրվարի 29 – մամլո ասուլիս ներկայացնելու նախընտրական արշավի վերաբերյալ հայտարարությունը
18. 2008թ. հունիսի 27 – Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների աշխատանքի մասին ԵԽԽՎ-ի 1609 որոշումը – քաղաքացիական հասարակության տեսակետը
19. 2008թ. հոկտեմբերի 9 – ՀՀ կողմից ԵԽԽՎ 1609 և 1620 որոշումների իրականացումը և Հայաստանում վերջին զարգացումների հետ կապված հիմնական մտահոգությունները (Հեռարձակման օրենքի վերջերս ընդունված փոփոխությունները, բռնությունները լրատվամիջոցների ազատության դեմ, հանրահավաքների արգելքի հետ կապված օրենքը, ինչպես նաև լայնատարած կոռուպցիան և իշխանության ու պաշտոնի չարաշահումը)
20. 2008թ. հոկտեմբերի 30- Բռնությունը դպրոցներում հաշվետվության ներկայացում
21. 2008թ. նոյեմբերի 14 – Հասարակական շարժումը երրորդ հազարամյակի հեռանկարում. նոր մարտահրավերներ, առաջնահերթություններ և ռազմավարություն
22. 2008թ. դեկտեմբերի 12 – Ազգային ժողովի քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության մոնիտորինգի հաշվետվության ներկայացում
23. 2008թ. դեկտեմբերի 18 – 2008թ. ԵՀՔ իրականացման գնահատականը քաղաքացիական հասարակության կողմից

## Գործընկերության անդամները

Կազմակերպություն	Կոնտակտ. անձ	Հեռ.	Էլ. Փոստ
«Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ՀԿ	Ավետիք Իշխանյան	560372	hca@xter.net avetik@armhels.org
«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ	Ջենմա Հասրաթյան	52-25-42 53-68-02	aawue@arminco.com
«Հայաստանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա» ՀԿ	Անահիտ Բայանդուր	26 47 12	natalya.martirosyan@gmail.com hca@netsys.am
«Ինտերնյուս - Հայաստան» ՀԿ	Նունե Սարգսյան	583620	nouneh@internews.am
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ - Հայաստանյան մասնաճյուղ	Լարիսա Մինասյան	542119 543901	mlarisa@osi.am
«Երևանի մամուլի ակումբ» ՀԿ	Բորիս Նավասարդյան	530067	boris@ypc.am
«Աքիլես» ՀԿ	Էդուարդ Հովհաննիսյան	275744	achill@netsys.am
«Քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոն» ՀԿ	Ադասի Ենոքյան	541022	aghasy@publicis.am
«Հայաստանի հրատարակիչների ազգային ասոցիացիա» ՀԿ	Վահան Խաչատրյան	223434	armnpa@netsys.am
«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ	Լևոն Բարսեղյան	(312) 30622	levon@asparez.am nadia@asparez.am
«Հույսի կամուրջ» ՀԿ	Սուսաննա Թադևոսյան	589186	bridge@arminco.com lilit_stepanyan@bridgeofhope.am
«Խաղաղարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոն» ՀԿ	Գեորգի Վանյան	(09)401459	ccpmi@web.am
«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ	Արման Դանիելյան	574317 093 991788	csi@csi.am
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ	Ստեփան Դանիելյան	22 36 97 41 53 89	colfordem@gmail.com stepandan@yahoo.com
Հոգեկան առողջության հիմնադրամ	Կարեն Նահապետյան	544504	mhf@mentalhealth.am
«Ժողովրդավարություն. քաղաքական և իրավական հետազոտությունների կենտրոն» ՀԿ	Վարդան Պողոսյան	540981 (091) 408298	wartan@netsys.am
«Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամ	Հակոբ Հակոբյան	570260	hhakobyan@gateway.am
«Ֆեմիդա» ՀԿ	Ջուլիետա Ամիրխանյան	585405 091 423720	julia@femida.am
«Ազատ մանկավարժական	Ռաֆայել Մադոյան	618121	manager117@hotmail.com

ասոցիացիա» ՀԿ			
«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ	Աշոտ Մելիքյան	530067 533541	ashot@ypc.am
«Հայաստանի ինտերնետ միություն» ՀԿ	Իգոր Մկրտումյան	512653	imkrtoutm@aua.am
Հայաստանի ժուռնալիստների միություն	Աստղիկ Գևորգյան	561276	photolur@arminco.com
«Կամք և կորով» ՀԿ	Մարի Պահուսյան	538541	kamkorov@netsys.am
«Խնամք» ՀԿ	Վահագն Մաժինյան	09 465775	khnamk@hotmail.com
«Նոր Հայաստան» ՀԿ	Էլենորա Մանանդյան	529748	new_arm@xter.net info@newarmenia.org
«Հոգևոր Հայաստան» ՀԿ	Անահիտ Հարությունյան	62 73 75 091 493897	anhar@rambler.ru
«Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ» ՀԿ	Ալեքսանդր Իսկանդարյան	540631	
«Տեղեկատվական պահոցների ավտոմատացման և հետազոտման խումբ» ՀԿ	Տիգրան Զարգարյան	548371	tigran@ysu.am
Էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում	Անրի Ներսիսյան	524750	nerses@flib.sci.am
«Աջակից» ՀԿ	Հեղինե Մկրտչյան	(312) 34504	ajakits@shirak.am
«Կրթության ասպարեզ» ՀԿ	Ռուզան Մովսիսյան	(312) 21488	eduasp@freenet.am
Իրավա-հոգեբանական, կրթական և տեղեկատվական կենտրոն	Գերասիմ Ասրյան	(256) 32891	asryan@rambler.ru
Լոռե էկո ակումբ	Մանյա Մելիքջանյան	(256) 22477	lore@freenet.am
«Մեղվիկ» ՀԿ	Վեհանուշ Հովհաննիսյան	(312) 42964	meghvik@shirak.am
«Մուշ - 2» համայնքային կենտրոն» ՀԿ	Մարինե Հակոբյան	(312) 34175	n/a
«Պարադիզմա 2000» ՀԿ	Գագիկ Գալիկյան	552073 537080	mbars@arminco.com
«Սոցիալական ինժեներիայի կենտրոն» ՀԿ	Նիկոլ Մարգարյան	(312) 22721 (041) 39323	asparez@web.am
Ստեփանավանի երիտասարդական կենտրոն	Լիլիթ Սիմոնյան	(256) 32291 056 22023	lilit_simonyan@rambler.ru
«Թիմ» հետազոտությունների կենտրոն ՀԿ	Ավետ Դեմուրյան	563771 524227	adem@arminco.com
«Բժիշկների և ինժեներների միություն» ՀԿ	Ասյա Խաչատրյան	560110	medi@arminco.com
Երիտասարդներին նպաստելու կենտրոն	Արտակ Մանուկյան	n/a	a_manukyan@rambler.ru

AEDOS քաղաքականության հետազոտության ինստիտուտ	Հայկ Գյուզալյան	n/a	gyuzalyan@netsys.am
Զարգացման հայկական ինստիտուտ	Վիգեն Քոչարյան	091 40 41 46	vkoch@netsys.am
ՆԼՄ և հոգեկարգավորման կենտրոն	Ռուբեն Նադոյան	26 40 69	n/a
Գորիսի մամուլի ակումբ	Սուսաննա Շահնազարյան	284 2 0731 284 2 2435	shso9@yahoo.com
"New Generation" երիտասարդական կազմակերպություն	Արտյոմ Զաքարյան	n/a	n/a
Սոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոն	Արման Վարդանյան	56 05 44	vardanyan@policy.hu vardanyan@mentalhealth.am
"TRUST" Սոցիալական հետազոտությունների կենտրոն	Հասմիկ Գևորգյան	53 80 15	hasmikgevorgyan@hotmail.com
Ազատ մանկավարժական ասոցիացիա	Ռաֆայել Մադոյան	618121	manager117@hotmail.com
Հայաստանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա - Վանաձոր	Արթուր Սակունց	322 4 2268	hcav@hcav.am asakunts@hcav.am
Երկինք Սոցիալ-իրավական աջակցության կենտրոն ՀԿ	Քնարիկ Խաչատրյան	312 3 4864	skyngo@yandex.ru
Հայաստանի հանրային առողջության միություն	Հովհաննես Մարգարյանց	52 04 70 58 64 67	aphu_info@armenia.com
Արագ բարեգործական հասարակական կազմակերպություն	Թամարա Աբրահամյան	27 06 88	araza@arminco.com
Ս. Սանդուխտ կույսի անվան տիկնանց միություն	Արտեմիս Լեփեջյան	25 33 15	a_lepejyan@yahoo.com
Իրավունքների տեղեկատվական կենտրոն	Մարատ Դադունց	284 2 6734	itek@rambler.ru
Լոռու ՄԻԳ Սպը	Սամվել Հարությունյան	322 3 0056 322 3 0555	lorumig@mail.ru
Սելեն ակումբ	Դավիթ Հովհաննիսյան	093 318013	selenhk@rambler.ru
Ընդդեմ իրավական կամակայանության	Միքայել Արամյան	56 82 72	favl@netsys.am